

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատներ թթ. 9935/06 և 23339/06)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2015 թվականի մարտի 31

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հանդես գալով հետևյալ կազմով՝

Ջոզեփ Քասադևալ [Josep Casadevall], *նախագահող,*
Լուիս Լոպես Գերրա [Luis López Guerra],
Յան Շիկուտա [Ján Šikuta],
Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],
Ջոհաննես Սիլվիս [Johannes Silvis],
Վալերիու Գրիցկո [Valeriu Griţco],
Իուլիա Անտոանելլա Մոտոչ [Iulia Antoanella Motoc], *դատավորներ,*
և Մարիալենա Ցիրլի [Marialena Tsirli], *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

2015 թվականի մարտի 10-ին տեղի կայացած դռնփակ նիստում

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2006 թվականի փետրվարի 8–ին և 2006 թվականի մայիսի 10–ին՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի երեք քաղաքացիներ պրն. Բագրատ Նալբանդյանի («առաջին դիմումատու»), տկն. Նարինե Նալբանդյանի («երկրորդ դիմումատու») և տկն. Արևիկ Նալբանդյանի («երրորդ դիմումատու») ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 9935/06 և 23339/06 գանգատների հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել է Երևանում գործող փաստաբան տկն. Ս. Սաֆարյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուները, մասնավորապես, պնդել են, որ 2004 թվականի հունիս և հուլիս ամիսներին ոստիկանությունում ազատությունից զրկված լինելու ընթացքում նրանց հետ վատ են վերաբերվել, որ վատ վերաբերմունքի վերաբերյալ իրենց բողոքների առնչությամբ արդյունավետ քննություն չի իրականացվել, որ առաջին և երկրորդ դիմումատուները զրկված են եղել արդյունավետ իրավաբանական օգնությունից և որ առաջին դիմումատուն ապօրինի զրկվել է Վճռաբեկ դատարանի մատչելիությունից:

4. 2009 թվականի հոկտեմբերի 20–ին գանգատներն ուղարկվել են Կառավարությանը: Քանի որ Հայաստանի Հանրապետության դատավորի պաշտոնը ներկայում թափուր է, Դատարանի նախագահը որոշել է դատավոր Յոհաննես Սիլվիսին նշանակել ժամանակավոր (*ad hoc*) դատավոր (Դատարանի Կանոնակարգի 29–րդ կանոնի 2 (ա) կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1961, 1964 և 1988 թվականներին: Առաջին և երկրորդ դիմումատուները գանգատները ներկայացնելու պահին պատիժ են կրել «Կոշ» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներում: Երրորդ դիմումատուն բնակվում է Հայաստանի Հանրապետության Վարդենիս քաղաքում:

6. Առաջին և երկրորդ դիմումատուներն ամուսիններ են: Երրորդ դիմումատուն իրենց դուստրն է: Գործի քննության ժամանակ նրանք բնակվել են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում:

Ա. Դիմումատուների և նրանց նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի առնչությամբ իրականացված քրեական վարույթը

7. 2004 թվականի հունիսի 8–ին քրեական գործ է հարուցվել տեղացի աղջկա սպանության փաստի առթիվ, ով երրորդ դիմումատուի համադասարանցին է եղել, և ում մարմինը հայտնաբերվել է դիմումատուների տանից ոչ հեռու:

8. Առաջին դիմումատուն պնդում է, որ այդ նույն օրը նրան տարել են Ոստիկանության Վարդենիսի բաժին, որտեղ նրան ապօրինի պահել են՝ առանց ձերբակալումն արձանագրելու: Ոստիկանության բաժնում ոստիկանները նրան շարունակաբար ծեծել են՝ փորձելով ստիպել խոստովանել, որ վերոնշյալ սպանությունը կատարել է ինքը:

9. 2004 թվականի հունիսի 24–ին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182–րդ հոդվածի համաձայն, առաջին դիմումատուին մեղավոր է ճանաչել՝ ոստիկանների օրինական պահանջներին չարամտորեն չենթարկվելու համար, և նրա նկատմամբ նշանակել է տասնհինգ օր ժամկետով կալանք: Դատարանը գտել է, որ առաջին դիմումատուն փողոցում հայհոյել է և չի ենթարկվել իրեն կարգի հրավիրելու փորձեր կատարող ոստիկաններին:

10. Առաջին դիմումատուն պնդում է, որ որոշումն անհիմն է և որ իրականում իրեն այդ ամբողջ ժամանակահատվածում Ոստիկանության բաժնում պահել են վերոնշյալ սպանության կապակցությամբ: Նրա նկատմամբ կիրառված վարչական տույժը պարզապես օգտագործվել է՝ որպես նրան ազատությունից շարունակական անօրինական զրկելն օրինականացնելու միջոց:

11. Երկրորդ և երրորդ դիմումատուները պնդում են, որ 2004 թվականի հունիսի 8–ից ի վեր նրանց նույնպես շարունակաբար ճնշել են տեղի իրավապահ մարմինների աշխատակիցները, հաճախ տարել են Ոստիկանության բաժին, ինչպես նաև ճնշել և ստիպել են խոստովանել սպանությունը կամ մեղադրել միմյանց:

12. 2004 թվականի հունիսի 30–ին երկրորդ դիմումատուն, Վարդենիսի մի շարք այլ քաղաքացիների հետ միասին, դիմում է ներկայացրել Գլխավոր դատախազին և Հայաստանի ոստիկանության պետին՝ պնդելով, որ վերոնշյալ սպանության կապակցությամբ 2004 թվականի հունիսի 8–ից սկսած առաջին դիմումատուն ապօրինի էր կալանավորվել, և որ իրավապահ մարմինների աշխատակիցները ահաբեկել են դիմումատուների ընտանիքը: Նրանք նաև պնդել են, որ երկրորդ դիմումատուին նույնպես կանչել են Ոստիկանության Վարդենիսի բաժին, որտեղ բաժնի պետ Վի. Հ.–ն նրան կարգադրել է ընդունել, որ առաջին դիմումատուն ցանկացել է բռնաբարել տուժողին և որ նա, իմանալով դրա մասին՝ խանդից դրդված, սպանել է աղջկան: Նրանք պնդել են, որ երկրորդ դիմումատուին ծեծել են, բայց նա հրաժարվել է խոստովանել:

13. Երկրորդ դիմումատուն պնդում է, որ 2004 թվականի հուլիսի 8–ին նրան կանչել են Ոստիկանության Վարդենիսի բաժին, որտեղ բաժնի պետ Վի. Հ.–ն նրան կարգադրել է ցուցմունք տալ առաջին դիմումատուի դեմ: Երբ նա հրաժարվել է, նրան ծեծել են Վ. Հ.–ն և իրավապահ մարմինների բազմաթիվ այլ աշխատակիցները, այդ թվում՝ քրեական հետախուզության բաժանմունքի պետի տեղակալ Ն. Հ.–ն, քրեական հետախուզության բաժանմունքի երկու աշխատակից՝ Կ. Ն.–ն և Կ. Մ.–ն, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Ֆ.Բ.–ն: Նրան ծեծել են մահակներով, իսկ երբ նա ուշաթափվել է, ոստիկանները գիտակցության են բերել և շարունակել են ծեծել: Դրանից հետո ոստիկաններն երրորդ դիմումատուին բերել են Ոստիկանության բաժին և փակել մոտակա մութ ու առնետներով լի սենյակում: Երկրորդ դիմումատուին սպառնացել են, որ կբռնաբարեն երրորդ դիմումատուին, եթե նա հրաժարվի խոստովանել: Դրանից հետո նա խոստովանել է: Ըստ երևույթին, առաջին դիմումատուն նաև խոստովանել է, որ ինքն օժանդակել է երկրորդ դիմումատուին սպանությունը կատարելու մեջ:

14. Երրորդ դիմումատուն պնդում է, որ իրեն բազմաթիվ առիթներով տարել են ոստիկանության բաժին՝ հաճախ ուշ ժամերի: Ոստիկանները նրան նվաստացրել են, սպառնացել են բռնաբարել և ճնշում են գործադրել, որպեսզի նա ընդունի, որ երկրորդ դիմումատուն է կատարել սպանությունը, և որ դրա շարժառիթը նրա և տուժողի միջև լարված հարաբերություններ են: Նա նաև պնդում է, որ տեսել է իր հորը և մորը ոստիկանության բաժնում, և որ նրանց վրա առկա էին վատ վերաբերմունքի հետքեր:

15. Առաջին և երկրորդ դիմումատուները վերոնշյալ սպանության մեղադրանքով պաշտոնապես ձերբակալվել են 2004 թվականի հուլիսի 9–ին: Ինչպես երևում է գործի նյութերից, իրականացվել է երկրորդ և երրորդ

դիմումատուների առերեսում, որի ժամանակ երկրորդ դիմումատուն ընդունել է, որ ինքն է կատարել սպանությունը և հայտարարել, որ երրորդ դիմումատուն նրան օգնել է ազատվել դիակից:

16. Նույն օրը առաջին և երկրորդ դիմումատուները հրաժարվել են գործին մասնակցելու նպատակով քննիչի հրավիրած փաստաբանի ծառայություններից: Նրանք պնդում են, որ դա արել են, քննիչի ընտրությանը չվստահելու պատճառով: Ինչպես երևում է, դիմումատուները չեն խնդրել նշանակել մեկ այլ փաստաբանի:

17. Երրորդ դիմումատուն պնդում է, որ 2004 թվականի հուլիսի 9–ի լույս 10–ի գիշերը Ոստիկանության Վարդենիսի բաժնում նրան պահել են մենախցում, որտեղ լույս չի եղել և որը լի է եղել մկներով:

18. 2004 թվականի հուլիսի 10–ին երկրորդ դիմումատուն մասնակցել է դեպքի վայրում քննչական գործողությանը, որը տեսագրվել է:

19. Նույն օրը, երեկոյան ժամը 9:20–ից մինչև 10–ը, երրորդ դիմումատուին որպես վկա հարցաքննել է Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Ֆ. Բ.–ն: Նա նշել է, որ առերեսման ընթացքում երկրորդ դիմումատուն սուտ ցուցմունք է տվել, ինչը հավանաբար պայմանավորված է եղել թմրադեղերի ազդեցության տակ գտնվելու հանգամանքով: Նա նաև նշել է, որ երկրորդ դիմումատուն չի կատարել սպանությունը, և որ նրա վարքագիծը՝ ներառյալ խոստովանությունը և մեղադրանքները, տարօրինակ է եղել:

20. Երրորդ դիմումատուն պնդում է, որ այդ հարցաքննությունից հետո նա ծեծի է ենթարկվել Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Ֆ. Բ.–ի և դատախազության աշխատակազմի երկու այլ աշխատակիցների կողմից, որոնք քաշել են նրա մազերը, գցել գետնին և սկսել հարվածել ոտքերով: 2004 թվականի հուլիսի 11–ին ոստիկանները նրան տարել են տուն, որտեղ նա մի քանի օր անշարժ պառկել է մահճակալին, մինչև 2004 թվականի հուլիսի 13–ին նրան այցելել է իր մորեղբայրը և կազմակերպել նրա՝ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով Երևան տեղափոխումը:

21. 2004 թվականի հուլիսի 12–ին առաջին և երկրորդ դիմումատուներին սպանություն կատարելու համար պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել:

22. Նույն օրը Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն առաջին և երկրորդ դիմումատուների ներկայությամբ անցկացրել է դատական նիստ, որի ընթացքում քննել և բավարարել է կալանք որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը: Դատական նիստին ներկա է եղել մարզի դատախազի տեղակալ Ֆ. Բ.–ն: Դատավորը երկրորդ դիմումատուին հարցրել է՝ արդյոք նա կամավոր է խոստովանել, թե նրան ստիպել են խոստովանել, որին երկրորդ դիմումատուն պատասխանել է, որ նախնական քննության ընթացքում նրան չեն ստիպել կամ վախեցրել, և որ նա կամավոր է խոստովանել:

23. 2004 թվականի հուլիսի 14–ին երկրորդ դիմումատուն Ոստիկանության Վարդենիսի բաժնից փոխադրվել է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ:

Հիմնարկ ընդունվելուն պես երկրորդ դիմումատուն անցել է բժշկական հետազոտություն, որից հետո պարզվել է, որ նրա «ոտքերը կապտած են, արյունատար անոթների այտուցից առաջացած վնասվածքի արդյունքում»: Արձանագրվել է նաև, որ երկրորդ դիմումատուն ունեցել է արյան բարձր ճնշման, ոտքերի ցավերի և այտուցված ոտքերի հետ կապված գանգատներ:

24. Նույն օրը առաջին դիմումատուն փոխադրվել է «Կոշ» քրեակատարողական հիմնարկ:

25. 2004 թվականի հուլիսի 16–ին երրորդ դիմումատուն Երևանի «Արմենիա» բժշկական կենտրոնում անցել է բժշկական զննություն և նրա մոտ հայտնաբերվել է՝

> «Ուղեղի ցնցում (՞), գլխի փափուկ հյուսվածքների կապտուկներ [...], և մեջքի շրջանում ու ձախ թևի փափուկ հյուսվածքների կապտուկներ...»

26. 2004 թվականի օգոստոսի 23–ին երրորդ դիմումատուին վերաբերող մասով քրեական վարույթը կարճվել է՝ հանցագործության կատարման մեջ նրա մասնակցությունը ապացույցված չլինելու պատճառով:

27. 2004 թվականի օգոստոսի 25–ին առաջին և երկրորդ դիմումատուները խնդրել են, որպեսզի գործին ներգրավվի պետության կողմից նշանակված փաստաբան Կ.–ն: Դիմումատուները պնդում են, որ նույն օրը փաստաբան Կ.–ն խնդրել է, որպեսզի առաջին և երկրորդ դիմումատուներին հարցաքննեն իր ներկայությամբ, սակայն խնդրանքը մերժվել է:

28. 2004 թվականի օգոստոսի 26–ին քննությունն ավարտվել է, իսկ գործի նյութերը տրամադրվել են առաջին և երկրորդ դիմումատուներին: Նույն օրը դիմումատուները և իրենց փաստաբանը ծանոթացել են չորս հատորից բաղկացած գործի նյութերին:

Բ. Դատական վարույթը

29. 2004 թվականի օգոստոսի 31–ին Գեղարքունիքի մարզի դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը և գործը փոխանցվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննության համար: Մարզի դատարանում գործի քննության շրջանակներում առաջին և երկրորդ դիմումատուները հերքել են իրենց մեղքը և նշել, որ խոստովանական ցուցմունքները տրվել են վատ վերաբերմունքի արդյունքում:

30. Առաջին և երկրորդ դիմումատուները պնդել են, որ մարզի դատարանի նիստերն անցկացվել են շարունակական անկարգությունների մթնոլորտում՝ ներառյալ տուժողի հարազատներից և նրանց ընկերներից բաղկացած 25–30 հոգանոց խմբի կողմից դիմումատուներին ու իրենց փաստաբանին հասցեագրված իրական սպառնալիքների, ինչպես նաև խոսքերով արտահայտված և ֆիզիկական բնույթի ոտնձգությունների մթնոլորտում:

31. 2004 թվականի նոյեմբերին «Հելսինկյան Ասոցիացիա» ՀԿ–ի փաստաբան Ս.–ն առաջին և երկրորդ դիմումատուների կողմից ներգրավվել է գործում՝ փոխարինելով փաստաբան Կ.–ին: Ըստ դիմումատուների՝ նիստերը շարունակվել են նույն կերպ:

32. 2005 թվականի հունվարի 21–ին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահը Փաստաբանների պալատի նախագահին գրավոր տեղեկացրել է, որ փաստաբան Ս.–ն առանց նախապես զգուշացնելու չի ներկայացել 2005 թվականի հունվարի 19–ին կայացած նիստին: Հետևաբար, նիստը հետաձգվել է մինչև 2005 թվականի հունվարի 25–ը: Փաստաբան Ս.–ին ծանուցել էին դրա մասին, բայց նա դատարանին հեռախոսով տեղեկացրել էր, որ հրաժարվում է մասնակցել: Նախագահողն իր նամակում խնդրել է, որ միջոցներ ձեռնարկվեն՝ ապահովելու համար նրա մասնակցությունը, այլապես դատարանը ստիպված կլինի վարույթը շարունակել առանց նրա:

33. 2005 թվականի հունվարի 25–ին փաստաբան Ս.–ն դիմել է արդարադատության նախարարին՝ բողոքելով նիստերի ժամանակ տիրող անկարգություններից: Նա պնդել է, որ դիմումատուների նախկին պաշտպան Կ.–ին ծեծել են տուժողի հարազատները՝ խոչընդոտելով նրա հետագա մասնակցությունը, և որ ինքը վախենում է, որ նույնը կարող է իր հետ պատահել: Նա նաև պնդել է, որ անկարգությունները կանխելու ուղղությամբ դատարանը որևէ գործողություն չի ձեռնարկել, և խնդրել, որ գործը քննվի այլ դատարանում:

34. Առաջին և երկրորդ դիմումատուները պնդել են, որ փաստաբան Ս.–ն ստիպված էր բացակայել մի քանի նիստերից, քանի որ վախենում էր իր անվտանգության համար:

35. 2005 թվականի փետրվարի 4–ին մարզի դատարանը սպանության գործով մեղավոր է ճանաչել առաջին և երկրորդ դիմումատուներին և նրանց դատապարտել է ազատազրկման՝ համապատասխանաբար ինը և տասնչորս տարի ժամկետով: Այսպիսով, մարզի դատարանը քննել և մերժել է վատ վերաբերմունքի վերաբերյալ առաջին և երկրորդ դիմումատուների բողոքները հետևյալ հիմնավորմամբ.

ա) Գեղարքունիքի մարզի դատախազությունն ուսումնասիրել է այս պնդումները և դրանք ճանաչել անհիմն (տե՛ս ստորև § 60),

բ) վարույթի տարբեր փուլերում առաջին և երկրորդ դիմումատուներն այս պնդումների հետ կապված իրարամերժ հայտարարություններ են արել,

գ) երկրորդ դիմումատուն, մատնացույց անելով վերը նշված արարքների ենթադրյալ կատարողներին, այնուամենայնիվ հրաժարվել է դատական վարույթի ընթացքում նրանց հետ առերեսվել,

դ) 2004 թվականի հուլիսի 10–ին երկրորդ դիմումատուն մասնակցել է դեպքի վայրում անցկացված քննչական գործողությանը, որը տեսագրվել է և

հետազոտվել դատարանում. նա ազատորեն քայլում էր և չկար վատ վերաբերմունքի որևէ հետք,

ե) 2004 թվականի հուլիսի 12–ին կայացած դատական նիստում, որտեղ լուծվել է առաջին և երկրորդ դիմումատուների նկատմամբ կալանք կիրառելու հարցը, նրանք ընդունել են իրենց մեղքը և վատ վերաբերմունքի վերաբերյալ որևէ հայտարարություն չեն արել (տե՛ս վերևում՝ § 22),

զ) 2004 թվականի հուլիսի 13–ին առաջին և երկրորդ դիմումատուները նկարահանվել են ոստիկանության հեռուստատեսային ծրագրում, բայց վատ վերաբերմունքի վերաբերյալ որևէ պնդում չեն ուղղել ծրագրի անձնակազմին,

է) 2004 թվականի հուլիսի 14–ին տեղի ունեցած հարցաքննության ժամանակ երկրորդ դիմումատուն հրաժարվել է մեկնաբանել իր ձերբակալումից առաջ տարբեր մարմիններին ներկայացրած բողոքները՝ նշելով, որ այդ բողոքները ներկայացվել են իր ձերբակալումից առաջ և որ իրականությանը համապատասխանում են իր ձերբակալումից հետո տված ցուցմունքները,

ը) 2004 թվականի հուլիսի 14–ին առաջին և երկրորդ դիմումատուները տեղափոխվել են քրեակատարողական հիմնարկներ, և նրանց այդ հաստատություններում ընդունելու ժամանակ վատ վերաբերմունքի հետքեր չեն արձանագրվել,

թ) երկրորդ դիմումատուն վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումներն առաջին անգամ բարձրաձայնել է միայն 2004 թվականի օգոստոսի 21–ին՝ ձերբակալումից ավելի քան 40 օր անց,

ժ) վատ վերաբերմունքի վերաբերյալ երկրորդ դիմումատուի պնդումները հերքվել են Ոստիկանության Վարդենիսի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակից Կ. Մ.–ի՝ դատարանում որպես վկա տրված ցուցմունքներով:

36. 2005 թվականի փետրվարի 18-ին փաստաբան Ս.–ն բողոք է ներկայացրել: Իր բողոքում նա պնդել է, որ դիմումատուները զրկված են եղել արդյունավետ իրավաբանական օգնությունից, քանի որ 2004 թվականի դեկտեմբերի 14–ից դատարանում տիրող մշտական անկարգությունների պատճառով չի կարողացել մասնակցել դատական նիստերին: Նա նաև պնդել է, որ դիմումատուներին դատապարտել են՝ հիմնվելով հարկադրանքի ազդեցությամբ տրված խոստովանական ցուցմունքների վրա: Ինչպես երևում է, դիմումատուները նույնպես բողոքներ են ներկայացրել, որոնցում, մասնավորապես, հերքել են իրենց մեղքը և նշել, որ նրանց խոստովանական ցուցմունքները տրվել են վատ վերաբերմունքի արդյունքում:

37. Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում 2005 թվականի մարտի 22–ին սկսվել է գործի քննությունը: Ըստ առաջին և երկրորդ դիմումատուների՝ Վերաքննիչ դատարանում կայացած դատական նիստերն անցկացվել են այնպես, ինչպես Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում:

38. 2005 թվականի հունիսի 22–ին տեղի ունեցած դատական նիստին կռիվ է սկսվել տուժողի և դիմումատուների ազգականների միջև: Ինչպես երևում է, տուժողի ազգականները հեռացվել են դատական նիստերի դահլիճից, և նիստը վերսկսվել է: Դատական նիստը հետաձգվել է մինչև 2005 թվականի հունիսի 27–ը, որպեսզի փաստաբան Ս.–ն ժամանակ ունենա պատրաստել իր վերջին խոսքը:

39. 2005 թվականի հունիսի 24–ին «Հելսինկյան Ասոցիացիա»–ի նախագահը Վերաքննիչ դատարանին փոստի միջոցով փոխանցել է փաստաբան Ս.–ի վերջին խոսքի տեքստը՝ պնդելով, որ դա անհրաժեշտ է՝ փաստաբանի անձնական և ֆիզիկական անվտանգությունն ապահովելու համար: Նա պնդել է, որ 2005 թվականի հունիսի 22–ին կայացած նիստին տուժողի հարազատները հարձակվել էին փաստաբանի վրա: Պաշտպանյալների հարազատներից մի քանիսի վրա նույնպես հարձակվել և ծեծել էին: Նա նաև պնդել է, որ ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ Վերաքննիչ դատարանում կայացած դատական նիստերի ժամանակ փաստաբանի նկատմամբ անընդհատ հնչել են սպառնալիքներ, սակայն դատարաններն արհամարհել են փաստաբանի՝ իր անվտանգությունն ապահովելու և սպառնալիքների մասին արձանագրություններում նշում կատարելու վերաբերյալ պահանջները:

40. 2005 թվականի հունիսի 27–ին դատական նիստը հետաձգվել է մինչև 2005 թվականի հուլիսի 1–ը՝ փաստաբան Ս.–ի բացակայության պատճառով: Դրանով Վերաքննիչ դատարանը նշել է փաստաբանի՝ իր անվտանգության մասին մտահոգությունները և իր անվտանգության հետ կապված վախի պատճառով դատական նիստերին մասնակցությունից հրաժարվելը:

41. Նույն օրը նախագահող դատավորը նամակով դիմել է Փաստաբանների պալատի նախագահին, որի պատճենն ուղարկել է փաստաբան Ս.–ին՝ նշելով, որ դատական նիստը հետաձգվել է, և խնդրելով ապահովել փաստաբանի ներկայությունը հաջորդ դատական նիստին: Նամակում նաև նշվում է, որ դատական նիստին մասնակցող անձանց անվտանգությունն ապահովելու համար ձեռնարկվել են համապատասխան միջոցներ:

42. 2005 թվականի հունիսի 29–ին փաստաբան Ս.–ն բողոք է ներկայացրել ոստիկանությանը 2005 թվականի հունիսի 22–ին տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ՝ պնդելով, որ ինքը նման պայմաններում աշխատում է վերջին վեցից յոթ ամիսների ընթացքում և որ անվտանգության մտավախությունից ելնելով չի կարողացել ներկայանալ 2005 թվականի հունիսի 27–ի դատական նիստին:

43. 2005 թվականի հուլիսի 1–ին Վերաքննիչ դատարանն անցկացրել է դատական նիստ: Փաստաբան Ս.–ն չի ներկայացել: Դատական նիստի արձանագրության համաձայն՝ դատարանն արձանագրել է փաստաբան Ս.–ի բացակայությունը և նշել է, որ և՛ փաստաբանը, և՛ Փաստաբանների պալատը

տեղեկացված են եղել, որ դատարանը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները դատական նիստին մասնակցող անձանց անվտանգությունն ապահովելու համար և, հետևաբար, խնդրել է ապահովել փաստաբանի ներկայությունը: Երկրորդ դիմումատուն նշել է, որ նա քրեակատարողական հիմնարկում հանդիպել էր փաստաբան Ս.–ին, և նրանք եկել էին համաձայնության, որ պաշտպանը չի ներկայանալու դատարան: Հետևաբար, նա ցանկություն է հայտնել հրաժարվել փաստաբանի ծառայություններից և չի ցանկացել այլ փաստաբան ունենալ: Առաջին դիմումատուն նույնպես նշել է, որ ինքը ցանկացել է վարույթը շարունակել առանց փաստաբանի և որ չի ցանկանում այլ փաստաբան ունենալ: Այնուհետև, դատարանը որոշել է վերադարձնել փաստաբան Ս.–ի վերջին խոսքի տեքստն այն հիմքով, որ նա այլևս չի ներկայացնում առաջին և երկրորդ դիմումատուներին:

44. Դիմումատուները պնդել են, որ 2005 թվականի հուլիսի 1–ին կայացած դատական նիստի արձանագրությունը պարունակում է ոչ ճշգրիտ տեղեկություններ և չի համապատասխանում իրականությանը: Ավելի ուշ, նրանց փաստաբանին մերժել են տրամադրել այս արձանագրության պատճենը, քանի որ նա ենթադրաբար այլևս լիազորված չէր՝ նրանց ներկայացնել և չէր կարող մեկնաբանել այդ արձանագրության ճշգրտությունը:

45. 2005 թվականի հուլիսի 2–ին Վերաքննիչ դատարանն ուժի մեջ է թողել առաջին և երկրորդ դիմումատուների նկատմամբ մեղադրական դատավճիռները: Վերաքննիչ դատարանը մերժել է վատ վերաբերմունքի վերաբերյալ նրանց պնդումները նույն հիմքերով, ինչ մարզի դատարանը՝ հավելելով, որ դատարանի նշանակած դատաբժշկական փորձագետի եզրակացության համաձայն՝ առաջին դիմումատուն չի ունեցել վնասվածքի նշաններ:

46. 2005 թվականի հուլիսի 8–ին փաստաբան Ս.–ն քրեակատարողական հիմնարկում այցելել է երկրորդ դիմումատուին:

47. 2005 թվականի հուլիսի 11-ին փաստաբան Ս.–ն իրավունքի հարցերի վերաբերյալ բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան: Իր բողոքում նա պնդել է, որ դիմումատուների հետ վատ են վերաբերվել և նրանց դատապարտել են՝ հիմնվելով հարկադրաբար կորզված ցուցմունքների վրա: Նա նաև պնդել է, որ դիմումատուները զրկված են եղել արդյունավետ իրավաբանական օգնությունից և իրենց գործի օբյեկտիվ քննության հնարավորությունից, քանի որ դատարանի դահլիճում անընդհատ տիրել է ահաբեկման մշտական մթնոլորտ: Վերաքննիչ դատարանին չի հաջողվել կարգուկանոն հաստատել, և շարունակական ծեծկռտուքների և սթրեսային մթնոլորտի պատճառով հնարավոր չի եղել հետազոտել ապացույցներն ու ներկայացնել նոր ապացույցներ օբյեկտիվ և արդար ձևով: Վերաքննիչ դատարանում վերջին երեք դատական նիստերի ժամանակ սաստկացել էին բախումները, բռնության սպառնալիքները, հայհոյանքներն ու ծեծկռտուքները: Սակայն դատարանը չի ձեռնարկել որևէ միջոց, ինչի հետևանքով խափանվել է

իր մասնակցությունը և անգամ անհնարին է դարձել իր վերջին խոսքը, որը, հետևաբար, նա ստիպված էր ներկայացնել փոստով: Դատարանի անգործությունը միայն խրախուսել է տուժողի հարազատների հետագա ավելի ագրեսիվ պահվածքը: Դիմումատուների նախկին փաստաբան Կ.–ն նույնպես չէր կարողացել մասնակցել դատական նիստերին, որոնք, համապատասխանաբար, իր բացակայությամբ կայացել են 2004 թվականի հոկտեմբերին:

48. Չպարզված օրը երկրորդ դիմումատուն ներկայացրել է իրավունքի հարցերի վերաբերյալ բողոք: Իր բողոքում նա պնդել է, որ հանցագործության կատարումը խոստովանել է ծեծի, խոշտանգման և սպառնալիքների գործադրման արդյունքում: Նա նաև բողոքել է, որ Վերաքննիչ դատարանում կայացած դատական նիստերն անցկացվել են առանց փաստաբանի մասնակցության:

49. 2005 թվականի հուլիսի 14–ին փաստաբան Ս.–ն 2005 թվականի հուլիսի 1–ով թվագրված նամակ է ստացել նախագահող դատավորից, որով դատավորը տեղեկացրել է, որ առաջին և երկրորդ դիմումատուները հրաժարվել են նրա ծառայություններից, քանի որ նա չի ներկայացել 2005 թվականի հունիսի 27–ին և հուլիսի 1–ին կայացած դատական նիստերին, ինչպես նաև վերադարձրել է նրա վերջին խոսքի տեքստը:

50. 2005 թվականի օգոստոսի 8–ին փաստաբան Ս.–ն լրացում է արել իր՝ 2005 թվականի հուլիսի 11–ին ներկայացրած բողոքին՝ հայտնելով, որ զարմացած է իր վերջին խոսքի տեքստի վերադարձով և այն վերադարձնելու հիմքերով: Փաստաբանը պնդել է, որ այս գործողությունների նպատակն էր քողարկել առաջին և երկրորդ դիմումատուների պաշտպանության իրավունքի խախտումը, ինչպես նաև դատական նիստերի ժամանակ կարգուկանոն հաստատելու հարցում դատարանի ձախողումը: Նա պահանջել է, որ իր վերջին խոսքի տեքստը կցվի գործի նյութերին: Նա նաև խնդրել է, որ Վճռաբեկ դատարանում դատական նիստի ժամանակ պաշտպանական միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի ինքը կարողանա մասնակցել դատական նիստին՝ հաշվի առնելով այն, թե առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում ինչպես են անցկացվել դատական նիստերը:

51. 2005 թվականի օգոստոսի 12-ին Վճռաբեկ դատարանը մերժել է երկրորդ դիմումատուի բողոքը: Վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների առնչությամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ դրանք մանրամասնորեն ուսումնասիրվել են մարզի ու Վերաքննիչ դատարանների կողմից և պարզվել է, որ այդ պնդումները հիմնավորված չեն: Ինչ վերաբերում է փաստաբանի ենթադրյալ բացակայությանը, ապա դատարանն անհիմն է համարել այս պնդումները և հիմնվելով գործի նյութերի վրա՝ գտել է, որ փաստաբանն առաջին օրվանից, այն է՝ 2005 թվականի մարտի 22–ից, ներգրավված է եղել Վերաքննիչ դատարանում գործի քննությանը: Ինչպես երևում է 2005 թվականի հուլիսի 1–ի դատական նիստի արձանագրությունից, երկրորդ

դիմումատուն հետագայում հրաժարվել է փաստաբանի ծառայություններից, քանի որ վերջինս չի ներկայացել 2005 թվականի հունիսի 27–ի և հուլիսի 1–ի դատական նիստերին: Հաշվի առնելով այս ամենը, ինչպես նաև այն, որ երկրորդ դիմումատուն չի ցանկացել ունենալ մեկ այլ փաստաբան, Վերաքննիչ դատարանն ընդունել է դա և այդ մասին նամակով տեղեկացրել է փաստաբանին:

52. Ինչ վերաբերում է փաստաբան Ս.–ի դիմումին, ապա Վճռաբեկ դատարանը Քրեական դատավարության օրենսգրքի 403–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն, դիմումը թողել է առանց քննության՝ հիմք ընդունելով այն, որ առաջին և երկրորդ դիմումատուները հրաժարվել են նրա ծառայություններից, և որ փաստաբանն այլևս լիազորված չէր նրանց անունից բողոք ներկայացնելու:

Գ. Վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքները և դրանց ուսումնասիրությունն առաջին և երկրորդ դիմումատուների նկատմամբ իրականացվող քրեական վարույթից դուրս

53. 2004 թվականի հուլիսի 21–ին երրորդ դիմումատուն բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին (օմբուդսմենին): Նա իր բողոքում, *inter alia*, նշել է, որ 2004 թվականի հուլիսի 10–ին դատախազի օգնական Վա. Հ.–ն և իրավապահ մարմինների մեկ այլ աշխատակից իրեն կոպտորեն հրել են ավտոմեքենայի մեջ և տարել պետի՝ Վի. Հ.–ի մոտ: Այնտեղ Վա. Հ.–ն նրան ստիպել է ծխախոտ ծխել, միաժամանակ պարբերաբար ձեռքով և շշով հարվածել նրա գլխին՝ ասելով, որ նա է կատարել սպանությունը: Չհամաձայնելու դեպքում նրան շարունակում էին ծեծել: Այդ պահին գրասենյակ է մտել մարզի դատախազի տեղակալ Ֆ. Բ.–ն և այնքան ուժեղ ապտակել, որ նրա ատամները ցավացել են: Պաշտոնյաներից մեկն ասել է. «Կռացի՛ր, լիրբ» և հրել են գետնին, որից հետո Ֆ. Բ.–ն, Վա. Հ.–ն և քննիչ Գ. Հ.–ն սկսել են գնդակի նման հարվածել նրան: Վա. Հ.–ն նրան կարգադրել է հանվել՝ ասելով, որ նրանք բժիշկ են հրավիրել՝ ստուգելու, արդյոք նա դեռ կույս է: Երբ նա հրաժարվել է, Վա. Հ.–ն հանել է նրա բաճկոնը: Նրանք ցանկացել են մերկացնել նրան, բայց նա դիմադրել է: Այնուհետև ներս են բերել նրա մորը և ծեծել, որից հետո մորն ասել են, որ կսպանեն աղջկան, եթե չհամաձայնվեն խոստովանել: Հետո նրան բաց են թողել միայն այն պայմանով, որ որևէ մեկին չի ասի, որ իրեն ծեծել են: Հաջորդ օրն առավոտյան նրան նորից տարել են ոստիկանության բաժին, որտեղ Ֆ. Բ.–ն սկսել է հարվածել նրա թևերին և հարկադրել խոստովանական ցուցմունք գրել: Հետո նորից բերել են մորը և նստեցրել դեմ առ դեմ: Նրանք սկսել են ծեծել նրա մորը և հրամայել, որ համոզի աղջկան խոստովանել: Մայրը աղաչել է անել դա՝ հավելելով, որ նրա հայրն այնքան վատ վիճակում է, որ չի ճանաչի, երբ տեսնի նրան և որ ամոթ չէ ստել այն վատ վերաբերմունքից հետո, որն իրենք կրել են: Մոր խնդրանքից հետո նա ի վերջո որոշել է համագործակցել:

54. 2004 թվականի օգոստոսի 2–ին երկրորդ դիմումատուն նույնանման բողոք է ներկայացրել Հայաստանի գլխավոր դատախազին: Նա, *inter alia*, նշել է, որ Ոստիկանության Վարդենիսի բաժնի պետ Վի. Հ.–ն և մարզի դատախազ Ֆ. Բ.–ն 2004 թվականի հուլիսի 9–ին իրեն տարել են Ոստիկանության Վարդենիսի բաժին: Այնտեղ նրան սպանության գործի կապակցությամբ ծեծի են ենթարկել Վի. Հ.–ն և հինգ այլ ոստիկաններ: Նրա ամուսնուն մոտ մեկ ամիս պահել են ոստիկանության բաժնում, որտեղ խոստովանություն կորզելու նպատակով ծեծել և քաշել են եղունգները, սակայն նա հրաժարվել է: Նրան և իր դստերը նույն կերպ ենթարկել են ծեծի և բռնության: Երեք օր շարունակ ոստիկանության բաժնի պետ Վի. Հ.–ն ծեծել է նրան և ստիպել նստել ջրի մեջ, որից հետո ինքը համաձայնել է գրել Վարդենիսի քննիչ Գ. Հ.–ի և մարզի դատախազ Գ. Հ.–ի թելադրած խոստովանությունը: Երկրորդ դիմումատուն հավելել է, որ պատրաստ է դատարանում կրկնել իր ցուցմունքները հանցագործների ներկայությամբ:

55. 2004 թվականի օգոստոսի 10–ին մարդու իրավունքների պաշտպանը երրորդ դիմումատուի բողոքը«Արմենիա» բժշկական կենտրոնի 2004 թվականի հուլիսի 16–ի բժշկական եզրակացության պատճենի հետ միասին, ուղարկել է Գլխավոր դատախազին (տե՛ս վերևում՝ § 25):

56. Վերոնշյալ բողոքները Գլխավոր դատախազն ուղարկել է մարզի դատախազություն ուսումնասիրություն կատարելու համար:

57. 2004 թվականի օգոստոսի 19–ին, 25–ին, 26–ին և 31–ին Գեղարքունիքի մարզի դատախազի ավագ օգնական Ե. Ի.–ն (այսուհետ՝ ավագ օգնական Ե. Ի.–ն), վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների հետ կապված ցուցմունքներ է վերցրել իրավապահ մարմինների հետևյալ աշխատակիցներից. Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Ֆ. Բ.–ից, մարզի դատախազի օգնական Վա. Հ.–ից, մարզի դատախազի աշխատակազմի քննիչ Գ. Հ.–ից, Ոստիկանության Վարդենիսի բաժնի պետ Վի. Հ.–ից, Ոստիկանության Վարդենիսի բաժնի Քրեական հետախուզության բաժանմունքի պետ Ս. Մ.–ից, այդ բաժանմունքի երկու աշխատակիցներ Ե. Մ.–ից և Կ. Մ.–ից, ինչպես նաև ոստիկանության բաժնի ձերբակալվածներին ժամանակավոր պահելու վայրի պետ Վ. Ա.–ից: Նրանցից խնդրել են տեղեկություններ տրամադրել վիճարկվող իրադարձությունների վերաբերյալ: Ի պատասխան Ե. Ի.–ի երկրորդ և երրորդ դիմումատուների նկատմամբ վատ վերաբերմունքի վերաբերյալ ցուցմունքները մեկնաբանելու հարցմանը՝ նրանք հերքել են երկրորդ և երրորդ դիմումատուների նկատմամբ որևէ բռնություն գործադրելու փաստը՝ պնդելով, որ դիմումատուները սուտ ցուցմունքներ են տվել:

58. 2004 թվականի օգոստոսի 30–ին ավագ օգնական Ե. Ի.–ն երկրորդ դիմումատուից ցուցմունք է վերցրել: Նա նշել է, որ 2004 թվականի հուլիսի 9–ին Վի. Հ.–ը և Ֆ. Բ.–ը իրեն տարել են ոստիկանության բաժին, որտեղ պահել են հինգ օր, և ռետինե մահակներով ծեծի է ենթարկվել Վի. Հ.–ի, ինչպես նաև

ոստիկաններ Ս. Մ.–ն, Ե. Մ.–ն, Կ. Մ.–ն և Վ. Ա.–ն կողմից: Նրան սպառնացել են շամպայնի շշով և նստեցրել են, իր համոզումով, էլեկտրական աթոռի վրա: Նրանից պահանջել են խոստովանել սպանությունը, այլապես նույն կերպ կվարվեն իր դստեր, ամուսնու և ընտանիքի այլ անդամների հետ: Դրանից հետո նա գրել է իրեն թելադրված խոստովանությունը: Բացի այդ, նա հանդիպել է արդեն մեկ ամիս ոստիկանությունում անազատության մեջ գտնվող ամուսնուն: Նրա եղունգները քաշել էին, նա քաշ էր կորցրել, իսկ շորերը կեղտոտ էին և պատռված: Երբ դիմումատուն նրան հարցրել է, թե ինչ է պատահել, նա սկսել է լաց լինել և ասել, որ շուրջ մեկ ամիս ինքը զրկված է եղել քնից և նրան անընդհատ ծեծել են: Նույն ժամանակ կողքի սենյակում ծեծում էին նրա դստերը: Կալանքի ընտրության կապակցությամբ դատական նիստին նա այս մասին դատավորին որևէ բան չի ասել, քանի որ իրեն ծեծել են, և ինքը վախենում էր, որ վատ վերաբերմունքը կշարունակվի:

59. Նույն օրը «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պետը և բուժկետի ղեկավարը, ըստ երևույթին մարզի դատախազության հարցմամբ, տրամադրել են 2004 թվականի հուլիսի 14–ին տեղի ունեցած երկրորդ դիմումատուի բժշկական հետազոտման արդյունքների վերաբերյալ տեղեկանք (տե՛ս վերևում՝ § 23):

60. 2004 թվականի օգոստոսի 31–ին ավագ օգնական Ե. Ի.–ն որոշում է կայացրել մերժել երկրորդ և երրորդ դիմումատուների բողոքների հիման վրա քրեական գործի հարուցումը: Որոշման մեջ նշված է.

> «2004 թվականի հուլիսի 21–ին և օգոստոսի 2–ին Մարդու իրավունքների պաշտպանին և Գլխավոր դատախազություն ուղարկված երկրորդ և երրորդ դիմումատուների բողոքները Գլխավոր դատախազությունը քննության համար փոխանցել է Գեղարքունիքի մարզի դատախազություն...
>
> Մարզի դատախազությունն ուսումնասիրել է վերոնշյալ բողոքները, մանրամասն ստուգել է ներկայացված փաստերը, ինչպես նաև այդ բողոքներում նշված ու քրեական գործում ներգրավված մարզի դատախազության և Ոստիկանության Վարդենիսի բաժնի աշխատակիցներից վերցրել է ցուցմունքներ:
>
> Երկրորդ և երրորդ դիմումատուների բողոքներում ծեծի կամ այլ տեսակի բռնության ենթարկված լինելու վերաբերյալ հայտարարությունները հերքվել են:
>
> Հանգամանքները հաստատվել են մարզի դատախազի տեղակալի [Ֆ. Բ.], դատախազի օգնականի [Վա. Հ.], դատախազության քննիչի [Գ. Հ.], Ոստիկանության Վարդենիսի բաժնի պետի [Վի. Հ.], նշված բաժնի Քրեական հետախուզության բաժանմունքի պետի [Ս. Մ.], նշված բաժանմունքի երկու օպեր լիազորների [Ե. Մ. և Կ. Մ.], ինչպես նաև [ոստիկանության բաժնի ձերբակալվածներին ժամանակավոր պահելու վայրի պետ Վ. Ա.–ի] ցուցմունքներով. «Աբովյան» քրեակատարողական

հիմնարկի 2004 թվականի օգոստոսի 30–ին տված տեղեկանքով, համաձայն որի [երկրորդ դիմումատուն] [«Աբովյան» ՔԿՀ] ընդունվելու օրը (2004 թվական հուլիսի 14–ին) ստուգվել է բժշկի կողմից և բողոքել արյան բարձր ճնշումից, ոտքերի ցավից և ոտքերի այտուցից: [Երկրորդ դիմումատուի ոտքերի վրա] կապտուկներն առաջացել են արյունատար անոթները վնասված լինելու արդյուքնում:

[Առաջին դիմումատուն] ծեծված լինելու կամ այլ տեսակի բռնության ենթարկված լինելու հետ կապված բողոքներ չի ներկայացրել:»

61. Դիմումատուները չեն ծանուցվել այս որոշման մասին:

62. 2004 թվականի դեկտեմբերի 8–ին «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պետը և այդ հիմնարկի բուժկետի ղեկավարը նամակ են ուղարկել փաստաբան Ս.–ին, որում նշել են, որ երկրորդ դիմումատուի՝ քրեակատարողական հիմնարկ ընդունվելու ժամանակ, այն է՝ 2004 թվականի հուլիսի 14–ին կատարված բժշկական հետազոտման ընթացքում, երկրորդ դիմումատուն բողոքել է ոտքերի ցավից և այտուցից: Պարզվել է, որ երկրորդ դիմումատուի ոտքերն այտուցված և կապտած են եղել:

63. 2004 թվականի դեկտեմբերի 12–ին փաստաբան Ս.–ն քրեական գործ հարուցելու խնդրանքով դիմել է Գլխավոր դատախազին: Փաստաբանը պնդել է, որ 2004 թվականի հունիս և հուլիս ամիսներին Ոստիկանության Վարդենիսի բաժնում բոլոր երեք դիմումատուների հետ վատ են վերաբերվել և ստիպել են խոստովանական ցուցմունքներ տալ: Նա նշել է, որ դիմումատուները մատնացույց են արել վերը նշված արարքների կատարողներին: Փաստաբանը հիմնվել է 2004 թվականի հուլիսի 14–ին «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում երկրորդ դիմումատուի և 2004 թվականի հուլիսի 16–ին «Արմենիա» բժշկական կենտրոնում երրորդ դիմումատուի բժշկական հետազոտությունների արդյունքներին:

64. Ինչպես երևում է, 2004 թվականի դեկտեմբերի 23–ին Գլխավոր դատախազությունը նամակ է ուղարկել փաստաբան Ս.–ին՝ տեղեկացնելով, որ Գեղարքունիքի մարզի դատախազության և ոստիկանության բաժնի աշխատակիցները առաջին և երկրորդ դիմումատուների նկատմամբ վատ չեն վերաբերվել:

65. 2005 թվականի հունվարի 25–ին փաստաբան Ս.–ն նույն խնդրանքով նորից դիմել է Գլխավոր դատախազին՝ հայտնելով, որ իր նախորդ՝ 2004 թվականի դեկտեմբերի 12–ին ներկայացված դիմումի պատասխան չի ստացել:

66. 2005 թվականի հունվարի 31–ին Գլխավոր դատախազությունը փաստաբան Ս.–ին ուղարկել է նույն բովանդակությամբ նամակ:

67. Չպարզված օրը փաստաբան Ս.–ն երեք դիմումատուների անունից դատարանում վիճարկել է Գլխավոր դատախազության գործողությունները, այդ թվում՝ երկու վերոնշյալ նամակները: Փաստաբանը բողոքել է 2004 թվականի հուլիսի 8–ից 12–ն ընկած ժամանակահատվածում դիմումատուների նկատմամբ ցուցաբերած վատ վերաբերմունքի վերաբերյալ և նշել նշված արարքների

կատարողների անունները, այդ թվում՝ Ոստիկանության Վարդենիսի բաժնի պետ Վի. Հ.–ի, ինչպես նաև այդ բաժնի ոստիկաններ Ե. Մ.–ի, Կ. Մ.–ի և Վ. Ա.–ի անունները: Նա պնդել է, որ մարզի դատախազը և իր ղեկավարած քննչական խումբը տեղյակ են եղել այս գործողությունների մասին, բայց անտարբեր են եղել և նույնիսկ խրախուսել են հարկադրանքի կիրառումը՝ մեղադրանքը հիմնավորող ապացույցներ ձեռք բերելու նպատակով:

68. 2005 թվականի մարտի 25-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանն առանց քննության է թողել փաստաբանի բողոքը: Վարչական շրջանի դատարանը գտել է, որ 2004 թվականի օգոստոսի 31–ին ընդունվել է մի որոշում, որով մերժվել է քրեական գործի հարուցումը: Սահմանված ընթացակարգի համաձայն՝ այս որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին կամ Վերաքննիչ դատարան:

69. 2005 թվականի մարտի 28-ին երրորդ դիմումատուն բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ: Նա պնդել է, *inter alia*, որ 2004 թվականի հունիս և հուլիս ամիսներին ինքը և մյուս երկու դիմումատուները շարունակաբար ենթարկվել են վատ վերաբերմունքի: 2004 թվականի հուլիսի 9-10–ը նա պահվել է Ոստիկանության Վարդենիսի բաժնում և ծեծի է ենթարկվել Գեղարքունիքի մարզի դատախազության աշխատակիցներ՝ Ֆ. Բ.–ի, Վա. Հ.–ի, Գ. Հ.–ի և Գ. Հ.–ի կողմից: Մարզի դատախազ Ա. Մ.–ն և ոստիկանության բաժնի պետ Վի. Հ.–ն տեղյակ են եղել այդ մասին: Նրա գլուխը, դեմքը և մեջքը վնասված են եղել, և նա ստիպված է եղել մի քանի օր անցկացնել անկողնում: Միայն իր մորեղբոր Ռուսաստանից վերադառնալուն պես այցելությունից հետո է նա ի վիճակի եղել բժշկական հետազոտության համար տեղափոխվել Երևան: Երրորդ դիմումատուն նաև նշել է, որ մոր հետ առերեսման ընթացքում նրա մոտ նկատել է վատ վերաբերմունքի նշաններ. ձեռքերը վնասված էին, դեմքն այտուցված էր և դժվարանում էր քայլել:

70. Նույն օրը փաստաբան Ս.–ն առաջին և երկրորդ դիմումատուների անունից 2004 թվականի օգոստոսի 31–ի որոշման դեմ բողոք է ներկայացրել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Իր բողոքում նա պնդել է, inter alia, որ ո՛չ նա, ո՛չ էլ դիմումատուները չեն ծանուցվել այս որոշման մասին և տեղեկացել են միայն 2005 թվականի մարտի 25–ին կայացած վարչական շրջանների դատարանի դատական նիստի ժամանակ: Ինչ վերաբերում է որոշման էությանը, այն ընդունվել է գործի ելքով շահագրգռված անձանց կողմից և հիմնված է եղել հանցանքի ենթադրյալ կատարողների անարժանահավատ ցուցմունքների վրա: Սակայն դիմումատուներն իրենց պնդումների վերաբերյալ երբեք չեն հարցաքննվել: Փաստաբանը հիմնվել է նաև 2004 թվականի հունիս-օգոստոս ամիսներին երկրորդ և երրորդ դիմումատուների կողմից ներկայացված բազմաթիվ բողոքներին, ինչպես նաև վերջիններիս 2004 թվականի հուլիսի 14-ի և 16-ի բժշկական հետազոտությունների արդյունքների վրա:

71. 2005 թվականի մայիսի 11–ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը միաժամանակ քննել է երկու հարցերը և որոշել է մերժել 2005 թվականի մարտի 25–ի որոշման դեմ ներկայացված բողոքը և քննության չառնել 2004 թվականի օգոստոսի 31–ի որոշման դեմ ներկայացված բողոքը՝ հիմք ընդունելով, որ այն ներկայացվել է բողոքարկման համար սահմանված մեկամսյա ժամկետի խախտմամբ:

72. 2005 թվականի մայիսի 25–ին փաստաբան Ս.–ն դիմումատուների անունից բողոք է ներկայացրել այս որոշման դեմ:

73. 2005 թվականի հուլիսի 22–ին Վճռաբեկ դատարանը բեկանել է այս որոշումը և գործը ուղարկել նոր քննության՝ հիմք ընդունելով այն, որ վերաքննիչ դատարանը չի պարզաբանել՝ արդյոք 2004 թվականի օգոստոսի 31–ի որոշումը պատշաճ կերպով և ժամանակին է տրամադրվել դիմումատուներին:

74. 2005 թվականի սեպտեմբերի 7–ին Վերաքննիչ դատարանը որոշել է բեկանել 2005 թվականի մարտի 25–ի որոշումը և ապահովել պաշտպանության իրավունքը վիճարկելու 2004 թվականի օգոստոսի 31–ի որոշումը, քանի որ չկա ապացույց, որը կվկայեր, որ որոշման պատճենը պատշաճ կերպով հանձնվել է դիմումատուներին՝ նախքան նրանց՝ 2005 թվականի մարտին դրա մասին տեղեկացված լինելը:

75. 2005 թվականի սեպտեմբերի 23–ին փաստաբան Ս.–ն դիմումատուների անունից Վերաքննիչ դատարան բողոք է ներկայացրել 2004 թվականի օգոստոսի 31–ի որոշման դեմ:

76. 2005 թվականի նոյեմբերի 10-ին Վերաքննիչ դատարանը որոշել է մերժել դիմումատուների բողոքը: Այսպիսով, դատարանն առաջին հերթին հաստատել է այդ որոշման մեջ ներկայացված եզրահանգումները և հավելել, որ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանները վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքները արդեն քննել ու մերժել են առաջին և երկրորդ դիմումատուների դեմ իրականացվող քրեական վարույթի ընթացքում:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական դատավարության օրենսգիրքը (գործի քննության ժամանակ գործող)

1. Վատ վերաբերմունքը և քրեական վարույթի հարուցումը

77. Համապատասխան դրույթներին ծանոթանալու համար տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը (թիվ 40094/05, §§ 101-114, 2012 թվականի հոկտեմբերի 2):

2. Պաշտպան ունենալու իրավունքը

78. 63–րդ և 64–րդ հոդվածներում սահմանվում է, որ կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպան ունենալու և նրա ներկայությամբ հարցաքննվելու իրավունք: Այս իրավունքից կասկածյալն օգտվում է ձերբակալման մասին հետաքննության մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարելու պահից, մինչդեռ մեղադրյալն դրանից օգտվում է իրեն մեղադրանք առաջադրվելու պահից:

79. Համաձայն 69–րդ հոդվածի՝ քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, եթե, inter alia, կասկածյալը կամ մեղադրյալը հայտնել են այդպիսի ցանկություն: Քրեական դատավարությունում պաշտպանի պարտադիր մասնակցությունը պետք է ապահովվի քրեական վարույթն իրականացնող մարմնը:

80. 72–րդ հոդվածով նախատեսվում է, որ պաշտպանից հրաժարվելը նշանակում է կասկածյալի կամ մեղադրյալի մտադրությունը՝ իր պաշտպանությունն իրականացնել առանց պաշտպանի օգնության: Պաշտպանից հրաժարվելու մասին կասկածյալի կամ մեղադրյալի հայտարարությունն արտացոլվում է արձանագրության մեջ:

3. Պաշտպանության միջոցները

81. 98–րդ հոդվածով նախատեսվում է, որ եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է, որ, inter alia, մեղադրյալը կամ պաշտպանը քրեական օրենքով արգելված ոտնձգությունից պաշտպանվելու կարիք ունի, այդ անձանց խնդրանքով կամ սեփական նախաձեռնությամբ ձեռնարկում է նրանց պաշտպանության անհրաժեշտ միջոցներ՝ կայացնելով համապատասխան որոշում: Նման միջոցները պարտադիր են, եթե քրեական դատավարությանը մասնակցող անձին կամ նրա մերձավոր ազգականներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ կամ գույքը ոչնչացնելով կամ նրա նկատմամբ կիրառել են բռնի գործողություններ՝ կապված քրեական գործով վարույթին նրա մասնակցության հետ: Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու մասին քրեական դատավարությանը մասնակցող անձի պահանջը քրեական գործի վարույթն իրականացնող մարմնի կողմից քննարկվում է անհապաղ, բայց ոչ ուշ, քան դա ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Կայացված որոշման մասին անմիջապես հայտնվում է դիմողին և նրան է ուղարկվում համապատասխան որոշման պատճենը:

82. 99–րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանության միջոցները, *inter alia,* ներառում են բռնության կամ այլ հանցավոր սպառնալիքներ գործադրած անձի նկատմամբ հնարավոր քրեական հետապնդում իրականացնելու մասին դատարանի կամ դատախազի կողմից տրվող նախազգուշացումը, ինչպես նաև տուժողի անվտանգությունն ապահովող միջոցները: Անձը, ով ենթարկվում է պաշտոնական նախազգուշացման, կանչվում է դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի մոտ: Պաշտպանվող անձի

անվտանգության ապահովումն իրականացվում է, inter alia, պաշտպանվող անձին կամ նրա ազգականին անձնական պահպանության տակ վերցնելով:

4. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ բողոք ներկայացնելու իրավունքը

83. 403–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և որոշումների դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն ամբաստանյալը, արդարացվածը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, մեղադրողը, տուժողը և նրա ներկայացուցիչը:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ

84. Հաշվի առնելով գանգատների փաստական և իրավական հանգամանքների ընդհանրությունը՝ դատարանը որոշում է միացնել գանգատները՝ Դատարանի կանոնակարգի 42–րդ կանոնի 1–ին մասի համաձայն:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

85. Դիմումատուները բողոքել են, որ 2004 թվականի հունիս և հուլիս ամիսներին անազատության մեջ գտնվելու ժամանակ ենթարկվել են վատ վերաբերմունքի, և որ իշխանությունները վատ վերաբերմունքի վերաբերյալ նրանց ցուցմունքների առնչությամբ արդյունավետ քննություն չեն իրականացրել: Նրանք վկայակոչել են Կոնվենցիայի 3–րդ հոդվածը, համաձայն որի՝

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Ա. Ընդունելիություն

86. Դատարանը նշում է, որ սույն գանգատներն ակնհայտ անհիմն չեն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ կետի «ա» ենթակետի իմաստով: Այնուհետև, Դատարանը նշում է, որ դրանք անընդունելի չեն որևէ այլ հիմքով: Հետևաբար, դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննություն

1. Ենթադրյալ վատ վերաբերմունքը

ա) Կողմերի փաստարկները

i) Կառավարությունը

87. Կառավարությունը վիճարկել է վատ վերաբերմունքի մասին դիմումատուների պնդումները՝ հայտարարելով, որ նրանք չէին կարողացել պատշաճ ապացույց ներկայացնել:

88. Ինչ վերաբերում է առաջին դիմումատուին, ապա 2004 թվականի հուլիսի 14–ին «Կոշ» քրեակատարողական հիմնարկ նրան ընդունելու պահին անցկացված բժշկական հետազոտության համաձայն՝ նրա մոտ վնասվածքներ չեն արձանագրվել: Ավելին, առաջին դիմումատուն իրարամերժ հայտարարություններ է արել քրեական վարույթի տարբեր փուլերում և բազմաթիվ առիթներով ասել է, որ իր հետ վատ չեն վերաբերվել:

89. Ինչ վերաբերում է երկրորդ դիմումատուին, ապա ըստ 2004 թվականի հուլիսի 14–ի բժշկական հետազոտության՝ ոտքերի արյունատար անոթները վնասվել են այտուցվածության հետևանքով: Նա նաև տառապում էր արյան բարձր ճնշումից, ուստի դա էր այտուցվածության պատճառը: Ավելին, մարզի դատարանի կողմից հետազոտված, 2004 թվականի հուլիսի 10–ի տեսագրությունում որևէ մարմնական վնասվածքներ չեն երևում երկրորդ դիմումատուի վրա. նա քայլում է ազատ և վրան չկան վատ վերաբերմունքի նշաններ: Վերջապես, 2004 թվականի հուլիսի 12–ին կայացած դատական նիստի ժամանակ նա հերքել է, որ իրեն հարկադրել են ցուցմունք տալ:

90. Ինչ վերաբերում է երրորդ դիմումատուին, ապա «Արմենիա» բժշկական կենտրոնի կողմից տրված բժշկական եզրակացությունը պատշաճ ապացույց չէր, քանի որ այն չէր պարունակում արձանագրված վնասվածքների բնույթի և դրանց պատճառների վերաբերյալ որևէ նշում, որը կարող էր ապացուցել երրորդ դիմումատուի պնդումները: Ավելին, նա բժշկական կենտրոն այցելել էր միայն ոստիկանություն վերջին այցից մեկ շաբաթ անց և այդ ընթացքում որևէ բողոք չէր ներկայացրել: Այն փաստը, որ նա այդ ժամանակ խոստովանական կամ այլ ցուցմունք չի տվել, նույնպես հաստատում է այն, որ չի եղել վատ վերաբերմունքի որևէ դրսևորում:

91. Վերջապես, դիմումատուների՝ վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումները քննվել են մարզի դատախազության ու դատարանների կողմից և ճանաչվել անհիմն:

ii) Դիմումատուները

92. Դիմումատուները վիճարկել են Կառավարության այն պնդումը, որ նրանք վատ վերաբերմունքի ապացույց չեն կարողացել ներկայացնել: Այդ ապացույցները հասանելի են դարձել երկրորդ դիմումատուին՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ ընդունելու ժամանակ: Կառավարությունը փորձել էր արձանագրված վնասվածքները, սխալ մեկնաբանելով, կապել արյան բարձր ճնշման հետ, չնայած այն փաստի, որ գործի նյութերում կար ապացույց առ այն, որ նա երբևէ չէր ունեցել առողջական խնդիրներ: Իրականում այտուցվածությունն առաջացել էր ոստիկանության բաժնում կիրառված բռնությունից, մասնավորապես՝ ռետինե մահակներով ոտքերին հարվածներից, որոնք նա նկարագրել է բազմաթիվ առիթներով, այդ թվում՝ դատական նիստերի ընթացքում:

93. Ինչ վերաբերում է 2004 թվականի հուլիսի 10–16–ն ընկած ժամանակահատվածում երրորդ դիմումատուի կողմից գանգատներ չներկայացնելուն, ապա պետք է հաշվի առնել այն, որ նա գործի քննության ընթացքում անչափահաս է եղել, ծնողները՝ կալանավորված: Կառավարության դրական պարտականությունն էր հոգ տանել նրա մասին՝ որպես անչափահասի, և պաշտպանել վատ վերաբերմունքից:

94. Ինչ վերաբերում է դատարանում հետազոտված տեսագրությանը, ապա կառավարությունը չէր նշել այն փաստը, որ միևնույն դատական նիստի ժամանակ դիմումատուներն առարկել էին և պնդել, որ տեսագրության մեջ երկուսն էլ դժվարությամբ էին շարժվում և որ իրենց մարմինների վրա տեսանելի էին վնասվածքներ, սակայն դատարանը օբյեկտիվ չէր և անտարբեր էր: Ընդ որում, այդ նույն դատարանն էր, որը նախկինում անօրինական և շինծու «վարչական կալանք» էր նշանակել առաջին դիմումատուի նկատմամբ՝ այդպիսով նրա անազատության մեջ գտնվելը երկարաձգելով ևս 15 օրով և թույլ տալով ոստիկաններին շարունակել խոստովանական ցուցմունքներ կորզել: 2004 թվականի հուլիսի 12–ին կայացած դատական նիստին, որի ժամանակ լուծվում էր կալանք կիրառելու հարցը, նույն դատարանը նկատել էր վնասվածքները և չէր հարցրել դրանց մասին: Դիմումատուները վախենում էին բարձրաձայնել այս հարցի մասին, քանի որ ոստիկանները ներկա էին դատական նիստին:

բ) Դատարանի գնահատականը

i) Ընդհանուր դրույթներ

95. Ինչպես բազմիցս նշվել է Դատարանի կողմից, 3–րդ հոդվածը հանդիսանում է ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնարար արժեքներից մեկը: Նույնիսկ ամենաբարդ իրավիճակներում, ինչպես օրինակ՝ ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում, Կոնվենցիայով բացարձակ իմաստով արգելվում են խոշտանգումները և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ

տուժողի վարքագծից (տե՛ս *Լաբիթան ընդդեմ Իտալիայի* [ՄՊ], թիվ 26772/95, § 119, ՄԻԵԴ 2000–IV, և *Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1996 թվականի նոյեմբերի 15, § 79, *Վճիռների և որոշումների մասին զեկույցներ* 1996–V): 3–րդ հոդվածով որևէ բացառություն չի նախատեսվում, և Կոնվենցիայի 15–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ չի թույլատրվում որևէ շեղում կատարել այդ պայմանից, նույնիսկ բնակչության կյանքին սպառնացող արտակարգ դրության դեպքում (տե՛ս *Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], թիվ 25803/94, § 95, ՄԻԵԴ 1999–V, ու *Ասսենովն և այլք ընդդեմ Բուլղարիայի*, 1998 թվականի հոկտեմբերի 28, § 93, *Վճիռների և որոշումների մասին զեկույցներ* 1998–VIII):

96. Դատարանը վերահաստատում է, որ վատ վերաբերմունքը պետք է ունենա դաժանության նվազագույն աստիճան, որպեսզի որակվի 3–րդ հոդվածի շրջանակներում: Դաժանության նվազագույն աստիճանի գնահատումը հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են օրինակ՝ վերաբերմունքի տևականությունը, դրա ֆիզիկական և հոգեկան ազդեցությունը և, որոշ դեպքերում՝ տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը (տե՛ս վերևում՝ *Լաբիթա*, վերևում մեջբերված, § 120, և *Ասսենովն և այլք*, վերևում մեջբերված, § 94): Ազատությունից զրկված անձի նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելը, եթե դա չի կատարվել վերջինիս սեփական վարքագծից առաջացած խիստ անհրաժեշտության պայմաններում, նվաստացնում է մարդկային արժանապատվությունը և, ըստ էության, Կոնվենցիայի 3–րդ հոդվածում սահմանված իրավունքի խախտում է (տե՛ս *Ռիբիչն ընդդեմ Ավստրիայի*, 1995 թվականի դեկտեմբերի 4, § 38, Սերիա A թիվ 336, *Սելմունի*, վերևում՝ § 99, և *Շեյդաևն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 65859/01, § 59, 2006 թվականի դեկտեմբերի 7):

97. Երբ Դատարանը գնահատում է 3–րդ հոդվածով նախատեսված խախտման մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ ապացույցները, այն գլխավորապես կիրառում է ապացուցման «ողջամիտ կասկածից դուրս» չափանիշը: Այնուամենայնիվ, նման ապացույցը կարող է բխել այն հանգամանքից, որ առկա են բավականաչափ ծանրակշիռ, հստակ և համապատասխանող հետևություններ կամ փաստի առկայության մասին վկայող նման անհերքելի կանխավարկածներ (տե՛ս *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1978 թվականի հունվարի 18, § 161, Սերիա A թիվ 25, *Լաբիթա*, վերևում մեջբերված, § 121, և *Յալլոհն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], թիվ 54810/00, § 67, ՄԻԵԴ 2006–IX):

98. Եթե պետական մարմիններն ամբողջությամբ կամ մեծամասամբ ծանոթ են խնդրահարույց իրադարձություններին, ինչպես օրինակ իրենց վերահսկողության տակ գտնվող ազատությունից զրկված անձանց դեպքում, ապա ազատությունից զրկված լինելու ընթացքում վնասվածքների առաջացման փաստի մասին կծագեն հիմնավոր կանխավարկածներ: Իսկապես,

ապացուցման բեռը, այն է՝ տալ բավարար և համոզիչ բացատրություններ, կրում են իշխանությունները (տե՛ս *Սալմանն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], թիվ 21986/93, § 100, ՄԻԵԴ 2000–VII, ու *Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], թիվ 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90 և 16073/90, § 183, ՄԻԵԴ 2009)։ Նույն կերպ, երբ անհատին առողջ վիճակում տանում են ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայր, իսկ ազատվելիս նրա մոտ հայտնաբերվում են վնասվածքներ, ապա պետությունը պարտավորվում է վնասվածքների առաջացման մասին արժանահավատ բացատրություններ տալ (տե՛ս այլ մարմինների շրջանակում, *Ակսոյն ընդդեմ Թուրքիայի*, 1996 թվականի դեկտեմբերի 18, § 61, Զեկույցներ 1996–VI, *Սելմունի*, վերևում՝, § 87 և *Գեֆգենն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], թիվ 22978/05, § 92, ՄԻԵԴ 2010–...)։ Այլապես, խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի կասկածները փարատվում են հօգուտ դիմումատուի, և այս կապակցությամբ հարց կարող է բարձրացվել Կոնվենցիայի 3–րդ հոդվածի համաձայն (տե՛ս *Միխեևն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 77617/01, § 127, 2006 թվականի հունվարի 26)։

ii) Վերոնշյալ դրույթների կիրառումը սույն գործի նկատմամբ

99. Նախևառաջ, Դատարանը նկատում է, որ Կառավարության պնդմանը հակառակ, երկրորդ և երրորդ դիմումատուները ներկայացրել են այնպիսի ապացույցներ, որոնք վկայում են քննարկվող ժամանակահատվածում մարմնական վնասվածքների առկայության մասին։

100. Մասնավորապես, Ոստիկանության Վարդենիսի բաժնից «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելուց անմիջապես հետո երկրորդ դիմումատուն հետազոտվել է բժշկի կողմից, և նրա մոտ հայտնաբերվել են ոտքերի վնասվածքներ։ Կառավարությունը պնդել է, որ այդ վնասվածքներն առաջացել են այտուցվածությունից, բայց չի կարողացել բացատրել, թե ինչպես է երկրորդ դիմումատուի մոտ առաջացել այդ այտուցվածությունը. հատկապես նման լուրջ այտուցվածություն, որը հանգեցրել է արյունատար անոթների վնասվածքի և կապտուկների։ Կառավարության այն փաստարկը, որ այտուցվածությունն առաջացել է երկրորդ դիմումատուի արյան բարձր ճնշման հետևանքով, չի հիմնավորվում որևէ բժշկական կամ այլ ապացույցով և, հետևաբար, չի կարող ընդունվել որպես նման վնասվածքների վերաբերյալ բժշկական առումով ճշգրիտ կամ արժանահավատ բացատրություն։ Հետևաբար, երկրորդ դիմումատուն Ոստիկանության Վարդենիսի բաժնից ազատ է արձակվել ոտքերի բավականին լուրջ վնասվածքներով, որի համար Կառավարությունը չի կարողացել որևէ արժանահավատ բացատրություն տալ։ Ոչինչ չի վկայում այն մասին, որ նա նախքան ոստիկանության բաժին մուտք գործելը նման վնասվածքներ է ունեցել։

101. Դատարանը նաև նշում է, որ 2004 թվականի հուլիսի 10–ին երկրորդ դիմումատուի մասնակցությամբ անցկացված քննչական գործողության

տեսագրությունը, որն անգամ չի ներկայացվել Դատարանին, ինքնին չի կարող դիտվել որպես բավարար ապացույց՝ ենթադրելու, որ անազատության մեջ գտնվելու ընթացքում երկրորդ դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունք չի կիրառվել, հատկապես, որ նրա մոտ հայտնաբերված վնասվածքները եղել են ոտքերի վրա և չէին կարող տեսանելի լինել տեսագրության մեջ:

102. Ինչ վերաբերում է 2004 թվականի հուլիսի 12–ի կալանքի ընտրության կապակցությամբ նիստի ժամանակ երկրորդ դիմումատուի տրված ցուցմունքին (տե՛ս վերևում՝ § 22), ապա Դատարանը նշում է, որ եթե ենթադրյալ վատ վերաբերմունքից տուժած անձը դրանից անմիջապես հետո որևէ բողոք չի ներկայացրել կամ, ինչպես սույն գործում, ժխտել է վատ վերաբերմունքի ենթարկված լինելու փաստը, չի կարող ինքնին ծառայել որպես իրականում վատ վերաբերմունքի բացակայության մասին վկայող բավարար ապացույց: Հայտնի է, որ վատ վերաբերմունքից անմիջապես հետո տուժողի արված հայտարարությունների վրա կարող են լուրջ ազդեցություն ունենալ նման վատ վերաբերմունքի հետևանքով առաջացած սթրեսը, տրավման և վախը, հատկապես, երբ նման անձինք շարունակում են մնալ անազատության մեջ (տե՛ս *mutatis mutandis*, *Հարությունյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 36549/03, § 65, ՄԻԵԴ 2007-VIII): Նույնը, և ավելին, կարելի է ասել երկրորդ դիմումատուի գործի մասին՝ հաշվի առնելով այն փաստը, որ վատ վերաբերմունք կիրառած ենթադրյալ անձանցից առնվազն մեկը, մասնավորապես՝ մարզի դատախազի տեղակալ Ֆ. Բ.–ն, ներկա է եղել խնդրո առարկա դատական նիստին:

103. Այսպիսով, Դատարանը եզրակացնում է, որ երկրորդ դիմումատուն Ոստիկանության Վարդենիսի բաժնում վատ վերաբերմունքի է ենթարկվել, որը, անկասկած, հասել է Կոնվենցիայի 3–րդ հոդվածով սահմանված դաժանության նվազագույն աստիճանի:

104. Ինչ վերաբերում է երրորդ դիմումատուին, Դատարանը, նախևառաջ նշում է, որ 2004 թվականի հուլիսի 10–ին երրորդ դիմումատուի Ոստիկանության Վարդենիսի բաժնում հարցաքննության նպատակով գտնվելու փաստը չի վիճարկվում: Դատարանը նաև նշում է, որ երրորդ դիմումատուի ոստիկանության բաժնից առանց վնասվածքների ազատ արձակվելու վերաբերյալ որևէ ապացույց չկա: Սակայն բազմաթիվ վնասվածքներ արձանագրվել են 2004 թվականի հուլիսի 16–ին՝ այն բանից հետո, երբ նրա մորեղբայրը բժշկական հետազոտություն անցնելու նպատակով իրեն տարել է Երևան (տե՛ս վերևում՝ § 25):

105. Դատարանը չի ընդունում Կառավարության այն փաստարկը, որ երրորդ դիմումատուի կողմից խոստովանական ցուցմունքների բացակայությունը կարող է իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից վատ վերաբերմունքի ենթարկված չլինելու ապացույց հանդիսանալ: Դատարանը նաև չի կարող համաձայնել Կառավարության այն հայտարարության հետ, որ «Արմենիա» բժշկական կենտրոնի բժշկական եզրակացությունը պատշաճ ապացույց չէ միայն այն հիմքով, որ նրանում նշված

չեն արձանագրված վնասվածքների պատճառները: Ընդ որում, այս փաստաթուղթը գործի քննության ժամանակահատվածում ներկայացվել է քրեական հետապնդման մարմիններին, որոնք չեն վիճարկել դրա արժանահավատությունը կամ ճշգրտությունը, կամ չեն հերքել այդ վնասվածքների և երրորդ դիմումատուի՝ Ոստիկանության Վարդենիսի բաժնում մնալու միջև հնարավոր կապը՝ չնայած նրա համապատասխան բողոքին (տե՛ս ստորև՝ §§ 121–130):

106. Ճիշտ է, որ երրորդ դիմումատուն գնացել է հիվանդանոց ոստիկանության բաժնից ազատվելուց միայն հինգ կամ վեց օր անց: Սակայն Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ գործի քննության ժամանակ նա եղել է անչափահաս և ում ծնողները դեռևս կալանավորված են եղել: Դատարանը չի թերագնահատում այն չափազանց խոցելի իրավիճակը, որի մեջ հայտնվել էր երրորդ դիմումատուն, ինչպես նաև այն վախն ու տառապանքը, որ նա ամենայն հավանականությամբ վերապրել է գործի քննության ժամանակ, որի պատճառով էլ ազատ արձակվելուց անմիջապես հետո նա բողոքներ ներկայացնելու համար որևէ քայլ չի ձեռնարկել: Հետևաբար, և հաշվի առնելով այն փաստը, որ ուշացումը գործի հատուկ հանգամանքներում չի կարող դիտարկվել որպես ոչ խելամիտ ուշացում, Դատարանը չի ցանկանում որևէ մեծ կարևորություն տալ այս ուշացմանը, որն ամեն դեպքում չի կարող համարվել այնքան կարևոր, որ կասկածի տակ դնի երրորդ դիմումատուի Կոնվենցիայի 3–րդ հոդվածի համաձայն ներկայացրած գանգատը (տե՛ս *mutatis mutandis*, *Բալողն ընդդեմ Հունգարիայի*, թիվ 47940/99, § 49, 2004 թվականի հուլիսի 20):

107. Դատարանը նաև ուշադրությունը հրավիրում է այն փաստին, որ թե՛ ներպետական մակարդակում, թե՛ Դատարանում երրորդ դիմումատուի վատ վերաբերմունքի վերաբերյալ արված ցուցմունքները համապատասխանում են բժշկական եզրակացությունում առկա վնասվածքների նկարագրությանը և շարունակական են վարույթների ընթացքում:

108. Վերջապես, Դատարանը մնում է այն եզրահանգմանը, որ երկրորդ դիմումատուն՝ երրորդ դիմումատուի մայրը, ազատությունից զրկված լինելու ընթացքում վատ վերաբերմունքի է արժանացել մոտավորապես նույն ժամանակահատվածում, ենթադրաբար նույն մարդկանց կողմից և նույն քրեական գործի շրջանակներում իրականացված քննության ընթացքում: Այս եզրահանգումը երրորդ դիմումատուի վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների օգտին է:

109. Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր գործոնները և հիմնվելով գործով առկա նյութերի վրա՝ Դատարանը եզրակացնում է, որ Կառավարությունը բավարար չափով չի ապացուցել, որ երրորդ դիմումատուին հասցված վնասվածքների պատճառն այլ է, քան ոստիկանության բաժնում նրա նկատմամբ կիրառված վատ վերաբերմունքը, ինչը բավականաչափ լուրջ է,

որպեսզի դիտարկվի Կոնվենցիայի 3–րդ հոդվածի գործողության շրջանակներում:

110. Հաշվի առնելով երկրորդ և երրորդ դիմումատուների նկատմամբ վերաբերմունքի առանձնահատկությունները, խոստովանական ցուցմունքներ ստանալու համար նման վերաբերմունք ցուցաբերելու ոստիկանների ակնհայտ մտադրությունները, այն փաստը, որ երկրորդ և երրորդ դիմումատուները մայր ու աղջիկ են և հետևաբար, երկուսն էլ հավանաբար ուժգին տառապել են մեկը մյուսի կրած ցավից, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ երրորդ դիմումատուն անչափահաս էր, Դատարանը գտնում է, որ խնդրո առարկա վերաբերմունքը Կոնվենցիայի 3–րդ հոդվածի իմաստով կարող է որակվել որպես խոշտանգում:

111. Ինչ վերաբերում է առաջին դիմումատուին, ապա գործի նյութերում չկա բժշկական բնույթի որևէ ապացույց, որը Դատարանին թույլ կտար եզրակացնել, որ դիմումատուն ենթարկվել էր այնպիսի վերաբերմունքի, որն անհամատեղելի է Կոնվենցիայի 3–րդ հոդվածի պահանջների հետ:

112. Համապատասխանաբար, երկրորդ և երրորդ դիմումատուների մասով տեղի է ունեցել Կոնվենցիայի 3–րդ հոդվածի նյութաիրավական խախտում, իսկ առաջին դիմումատուի նկատմամբ նման խախտում տեղի չի ունեցել:

2. Քննության ենթադրյալ ոչ պատշաճ լինելը

ա) Կողմերի փաստարկները

i) Կառավարությունը

113. Կառավարությունը պնդել է, որ պետական մարմինները կատարել են իրենց դրական պարտավորությունը: Մասնավորապես, Գեղարքունիքի մարզի դատախազությունը քննություն է սկսել 2004 թվականի հուլիսի 21–ին և օգոստոսի 2–ին ներկայացված բողոքների հիման վրա և ձեռնարկել մի շարք քննչական գործողություններ, ինչպիսիք են՝ երկրորդ դիմումատուից, ինչպես նաև Ոստիկանության Վարդենիսի բաժնի և մարզի դատախազության՝ գործով ներգրավված ոստիկաններից ու աշխատակիցներից ցուցմունք վերցնելը:

114. Բացի դրանից՝ քննիչը հարցում է կատարել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ՝ պարզելու, արդյոք վնասվածքները հայտնաբերվել են հիմնարկ ընդունվելու ժամանակ և բժշկից պարզաբանում ստանալու համար: Օգոստոսի 30–ին ստացվել է պատասխան, ըստ որի երկրորդ դիմումատուի ոտքերի վրա կապտուկներն առաջացել են այտուցվածությունից: Այսպիսով, բոլոր ապացույցների համակցությամբ քրեական գործ հարուցելու համար չի եղել որևէ հիմք և, հետևաբար, քննիչը 2004 թվականի օգոստոսի 31–ի իր որոշմամբ մերժել է այդ խնդրանքը:

ii) Դիմումատուները

115. Դիմումատուները նշել են, որ վատ վերաբերմունքի և երրորդ դիմումատուի նկատմամբ բռնաբարության սպառնալիքների վերաբերյալ իրենց բողոքները քննության համար փոխանցվել են նույն մարզի դատախազություն, որի աշխատակիցները ներգրավված են եղել այդ գործողություններում և շահագրգռված են եղել դրանց քողարկմամբ: Հետևաբար, տվյալ մարմինը չի եղել անկախ և անկողմնակալ:

116. Քննությունը պարզապես ձևական բնույթի է եղել, իսկ վնասվածքները զննելու համար որևէ բժշկական հետազոտություն չի նշանակվել: Այնուամենայնիվ, քննիչի հետ հանդիպման ժամանակ նրանք վերահաստատել են ոստիկանների և մարզի դատախազի տեղակալ Ֆ. Բ.–ի կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ իրենց պնդումները: Նրանք նաև դատավարության ընթացքում մանրամասն նկարագրել են տեղի ունեցած վատ վերաբերմունքը՝ նշելով ոստիկանների և դատախազության աշխատակիցների անունները: Սակայն, քրեական գործի հարուցման մերժմամբ մի շարք քննչական գործողությունների իրականացումն անհնարին է դարձրել:

117. Ավելին, ներպետական օրենքով պահանջվում է, որ բժշկական հաստատությունները տեղյակ պահեն իրավապահ մարմիններին այնպիսի վնասվածքների մասին, ինչպիսիք որ հայտնաբերվել են երրորդ դիմումատուի մոտ: Սակայն, Երևանում ոստիկանության համապատասխան բաժինը ոչինչ չի ձեռնարկել:

բ) Դատարանի գնահատականը

i) Ընդհանուր դրույթներ

118. Դատարանը վերահաստատում է, որ երբ անհատը ներկայացնում է փաստարկված պահանջ առ այն, որ Ոստիկանությունը կամ պետական այլ մարմինները վատ վերաբերմունք են ցուցաբերել իր նկատմամբ՝ խախտելով 3-րդ հոդվածը, ապա այդ դրույթով՝ զուգակցված Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված պետության ընդհանուր պարտավորության մասին դրույթի հետ, այն է՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայում ... », ինքնին ենթադրվում է, որ պետք է իրականացվի արդյունավետ պաշտոնական քննություն (տե՛ս վերևում՝ *Ասսենովն և այլք*, § 102, և *Լաբիթա*, § 131):

119. Քննություն իրականացնելու պարտավորությունը «արդյունքի պարտավորություն չէ, այլ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն». պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ հանգի մի եզրակացության, որը համապատասխանում է դիմումատուի կողմից նշված դեպքերի շարադրանքին, սակայն դրա միջոցով գործնականում պետք է

հնարավոր լինի արձանագրել գործի փաստերը: Այն դեպքում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ են, այն պետք է հանգեցնի հանցանքի համար պատասխանատուների բացահայտմանը և, համապատասխան հիմքերի առկայության դեպքում՝ նրանց պատժին: Այսպիսով, վատ վերաբերմունքի մասին արժանահավատ հայտարարությունների վերաբերյալ քննությունը պետք է բազմակողմանի լինի: Դա նշանակում է, որ իշխանությունները միշտ պետք է ձգտեն պարզել, թե ինչ է տեղի ունեցել և չպետք է անեն հապճեպ կամ անհիմն եզրակացություններ՝ իրենց քննությունը փակելու կամ դրանք իրենց որոշումների հիմք դարձնելու համար: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր ողջամիտ միջոցները միջադեպի հետ կապված ապացույցներ ձեռք բերելու համար, որը, *inter alia*, ներառում է, վկաների ցուցմունքները, դատաբժշկական փորձաքննությունը և այլն: Հետաքննության ցանկացած թերություն, որը կարող է խաթարել վնասվածքների պատճառի կամ հանցանքի համար պատասխանատու անձանց ինքնության հաստատումը, կարող է այս չափանիշին չհամապատասխանելու վտանգ առաջացնել (տե՛ս *Միխեև*, վերևում մեջբերված, § 108, և *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 40094/05, § 162, 2012 թվականի հոկտեմբերի 2):

120. Վերջապես, Դատարանը վերահաստատում է, որպեսզի պետական մարմինների կողմից ենթադրյալ վատ վերաբերմունքի առթիվ իրականացվող քննությունը լինի արդյունավետ, այն պետք է լինի անկախ: Քննության անկախությունն ենթադրում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև գործնական իմաստով անկախություն (տե՛ս *Օղուրն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], թիվ 21594/93, §91, ՄԻԵԴ 1999–III, *Մեհմեդ Էմին Յուկսելն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 40154/98, § 37, 2004 թվականի հուլիսի 20, ինչպես նաև *Էրգին ընդդեմ Թուրքիայի*, 1998 թվականի հուլիսի 28, § 83, Զեկույցներ 1998–IV, երբ աղջկա մահվան դեպքը քննող հանրային մեղադրողն անվտանգության ուժերի և ՔԲԿ-ի ենթադրյալ բախման ժամանակ անկախ չգտնվեց՝ հիմնվելով միայն միջադեպին ներգրավված ոստիկանների կողմից տրամադրված տեղեկությունների վրա):

ii) Սույն գործում վերոնշյալ դրույթների կիրառումը

121. Դատարանը, նախևառաջ, նշում է, որ երկրորդ և երրորդ դիմումատուների՝ վատ վերաբերմունքի մասին ներպետական մարմիններին ներկայացված պահանջներն անկասկած եղել են փաստարկված: Սակայն, հաշվի առնելով վերը նշված խախտման բացակայության մասին եզրակացությունը, առաջին դիմումատուի դեպքում իրավիճակը կարող է տարբեր լինել և հատևաբար պահանջում է առավել մանրամասն վերլուծություն:

122. Այս առումով Դատարանը նշում է, որ չնայած առաջին դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման մասին վկայող բժշկական բնույթի որևէ ապացույցի չկա, նա երկրորդ և երրորդ դիմումատուների

համապատասխանաբար ամուսինն է և հայրը և միևնույն քրեական գործով՝ կասկածյալ: Նրան մյուս երկու դիմումատուների հետ նույն ժամանակահատվածում տարել են Ոստիկանության նույն բաժին և, ըստ երևույթին, հարցաքննել են իրավապահ մարմինների նույն աշխատակիցները: Քննություն իրականացնող մարմինը տեղյակ է եղել բոլոր այս փաստերից, այդ թվում՝ նրա՝ վատ վերաբերմունքի ենթարկված լինելու մասին պնդումներին, նույնիսկ, եթե այդ պնդումները ուղղակիորեն ինքը չի արել, այլ ներկայացրել են մյուս երկու դիմումատուները և իր փաստաբանը: Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև բժիշկների տրամադրած բավարար ապացույցները, որոնց օգնությամբ Դատարանը գտել է, որ երկրորդ և երրորդ դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3–րդ հոդվածի նյութահիրավական խախտում, Դատարանը գործի հատուկ հանգամանքների ներքո գտնում է, որ պետական մարմինները նաև առաջին դիմումատուի դեպքում էին պարտավոր իրականացել արդյունավետ քննություն:

123. Ինչ վերաբերում է քննության պատշաճ լինելուն, Դատարանն ի սկզբանե նշել է, որ միակ հարցումը եղել է 2004 թվականի օգոստոսին Գեղարքունիքի մարզի դատախազության արած հարցումը: Հաշվի առնելով այն, որ պետական մարմինները ներգրավվել էին քննելու միևնույն դատախազության աշխատակիցների և տեղական ոստիկանության բաժնի նրանց ենթակաների գործողությունները, Դատարանը չի կարող նման քննությունը համարել անկախության և անկողմնակալության պահանջները բավարարող: Հարկ է նշել, որ քննություն իրականացնող մարմինները քննության ոչ մի փուլում չեն տրամադրել որևէ բացատրություն այն մասին, թե ինչու են նրանք համարում ոստիկանների կողմից տրված ցուցմունքները հավաստի, իսկ դիմումատուի ցուցմունքները՝ անվստահելի՝ չնայած, որ բժշկական բնույթի ապացույցները դիմումատուների օգտին էին: Քրեական գործի հարուցումը մերժող որոշումը պարունակում է որևէ պատճառաբանությունից զուրկ ընդհանրական եզրակացություններ (տե՛ս վերևում՝ § 60): Այսպիսով, պարզվում է, որ քննություն իրականացնող մարմինը, առանց որևէ հիմնավորման, նախապատվությունը տվել է ոստիկանների կողմից տրամադրված ցուցմունքներին և դրանով, կարելի է ասել, չի ցուցաբերել անհրաժեշտ օբյեկտիվություն և անկախություն:

124. Դատարանը չի կարող անտեսել մի շարք այլ նշանակալից բացթողումներ, որոնք կարող էին առավել վտանգել նախաձեռնած քննության արդյունավետությունը և եզրահանգումների վստահելիությունը:

125. Ինչ վերաբերում է բժշկական բնույթի ապացույցներին, ապա Դատարանը նշում է, որ քննություն իրականացնող մարմինը պատրաստակամորեն ընդունել է այն բացատրությունը, որ երկրորդ դիմումատուի ոտքերի վրա կապտուկներն առաջացել են այտուցվածությունից՝ առանց նույնիսկ նախևառաջ փորձելու պարզել, թե ինչպես է առաջացել այտուցվածությունը: Լրացուցիչ բժշկական հետազոտություններ չեն

նշանակվել, այս առնչությամբ չեն հարցաքննվել ոչ այդ եզրակացությունները տրամադրած բժիշկները, ոչ էլ որևէ այլ բժշկական փորձագետ: Երրորդ դիմումատուի դեպքում քննություն իրականացնող մարմինը նույնիսկ չի հետազոտել առկա բժշկական բնույթի ապացույցները, ինչպես օրինակ՝ 2004 թվականի հուլիսի 16–ին տրամադրված «Արմենիա» բժշկական կենտրոնի եզրակացությունները: Այսպիսով, պարզվում է, որ քննության որևէ փուլում այս ակնհայտ կարևոր ապացույցի վրա ուշադրություն չի դարձվել: Նույն կերպ, համապատասխան բժիշկները չեն հարցաքննվել և այս առնչությամբ որևէ լրացուցիչ բժշկական հետազոտություն չի նշանակվել: Վերջապես, առաջին դիմումատուի հետ կապված որևէ բժշկական հետազոտություն չի նշանակվել: Առաջին դիմումատուի դեպքում սա ավելի կարևոր էր՝ հաշվի առնելով այն, որ չկար նրա հետ կապված որևէ բժշկական բնույթի ապացույց:

126. Դատարանը նաև նշում է, որ ո՛չ առաջին դիմումատուն, ո՛չ երրորդը երբևէ չեն հարցաքննվել վատ վերաբերմունքի մասին իրենց պնդումների առնչությամբ: Պարզվում է նաև, որ որևէ փորձ չի կատարվել՝ բացահայտելու և հարցաքննելու որևէ այլ հնարավոր վկայի, իսկ դիմումատուների և ենթադրյալ վատ վերաբերմունք դրսևորած անձանց միջև չի եղել որևէ առերեսում: Ինչ վերաբերում է տեղի ունեցած հարցաքննությանը, ապա Դատարանը գտնում է, որ նման բազմաթիվ դեպքերում հարցաքննվողներին պարզապես խնդրել են տրամադրել իրադարձությունների վերաբերյալ իրենց հայտնի տեղեկությունները և որևէ հարց չի տրվել: Նույնիսկ այն քիչ դեպքերում, երբ քննիչը հարցեր է տվել, երբեք չի եղել մեկ ստանդարտ և ոչ կոնկրետ հարցից ավելի հարց (տե՛ս վերևում՝ § 57): Ուստի պարզվում է, որ տվյալ հարցաքննությունները եղել են պարզապես ձևական, և Դատարանը չի կարող դրանք համարել լուրջ փորձ՝ պարզելու այն հանգամանքները, որոնց պարագայում դիմումատուները տուժել են կամ կարող են տուժած լինել վատ վերաբերմունքից:

127. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը եզրակացնում է, որ իշխանություններին չի հաջողվել պատշաճ կերպով ձեռք բերել և գնահատել կարևոր նշանակություն ունեցող բժշկական և այլ բնույթի ապացույցներ, որոնք կարևոր նշանակություն ունեին գործի արդյունավետ լուծման համար:

128. Վերջապես, Դատարանը նշում է դիմումատուների՝ վատ վերաբերմունքի մասին պնդումներն ավելի բարձր ատյանների վերանայմանը ներկայացնելու փորձերի ապարդյունության մասին: Վատ վերաբերմունքի վերաբերյալ իրենց պնդումների առնչությամբ բազմակողմանի քննություն իրականացնելու և նշված արարքների ենթադրյալ կատարողներին հետապնդելու և պատժելու մասին դիմումատուների կողմից Գլխավոր դատախազություն ուղարկված բազմաթիվ բողոքներին տրվել են ձևական պատասխաններ (տե՛ս վերևում՝ §§ 64 և 66), մինչդեռ ներպետական դատարանները, մերժելով վատ վերաբերմունքի մասին իրենց ցուցմունքները, հանգել են ակնհայտորեն ոչ ճիշտ եզրահանգումների: Մասնավորապես,

դատարանները ճիշտ չեն եղել, երբ նշել են, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ ընդունվելու ժամանակ երկրորդ դիմումատուի մոտ վատ վերաբերմունքի նշաններ չեն արձանագրվել, և որ նա իր առաջին բողոքը ներկայացրել է ձերբակալումից միայն քառասուն օր անց, մասնավորապես՝ 2004 թվականի օգոստոսի 21–ին (տե՛ս վերևում՝ § 35): Այսպիսով, դատարանները նույնպես չեն կարողացել իրականացնել պատշաճ և բազմակողմանի քննություն:

129. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը եզրակացնում է, որ վատ վերաբերմունքի մասին դիմումատուների պնդումների առնչությամբ իշխանությունների կողմից իրականացված քննությունը եղել է անարդյունավետ և ոչ պատշաճ:

130. Հետևաբար, բոլոր երեք դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1–ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 3–ՐԴ ՄԱՍԻ (գ) ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

131. Կոնվենցիայի 6–րդ հոդվածի հիման վրա առաջին և երկրորդ դիմումատուները բողոք են ներկայացրել, որ զրկված են եղել արդյունավետ իրավաբանական օգնությունից: Մասնավորապես, 2004 թվականի օգոստոսի 26–ին իրենց փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու խնդրանքը մերժվել է, մինչդեռ դատարանում դատավարության ժամանակ տիրող մթնոլորտն իրենց փաստաբաններին թույլ չի տվել արդյունավետ իրականացնել իրենց գործառույթները: Առաջին դիմումատուն նաև բողոքել է, որ իրեն ապօրինի կերպով զրկել են Վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքից: Դատարանը գտնում է, որ նրանց բողոքը պետք է քննվի Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետի և 3–րդ կետի (գ) ենթակետի հիման վրա, որով, որքանով այն վերաբերում է գործին, սահմանվում է հետևյալը՝

> «1. «Յուրաքանչյուր ոք, ...նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ... արդար դատաքննության իրավունք»:
>
> 3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. ...
>
> գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը [:]»

Ա. Ընդունելիությունը

132. Կառավարությունը պնդել է, որ 2004 թվականի օգոստոսի 25–ին փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու դիմումի մերժումը ենթակա էր

բողոքարկման, բայց որևէ բողոքարկում չի եղել: Հետևաբար, այդ առումով ներպետական պաշտպանության միջոցները չեն սպառվել: Ինչ վերաբերում է առաջին դիմումատուին, ապա նա անձամբ չի կարողացել բողոք ներկայացնել 2005 թվականի հուլիսի 2–ին կայացված Վերաքննիչ դատարանի որոշման դեմ, մինչդեռ իր կողմից այդ որոշման դեմ փաստաբան Ս.–ի ներկայացրած բողոքը չի քննվել, քանի որ փաստաբան Ս.–ն այլևս լիազորված չի եղել ներկայացնելու առաջին դիմումատուին: Հետևաբար, առաջին դիմումատուն, 6–րդ հոդվածի համաձայն, իր բողոքների առնչությամբ չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

133. Առաջին և երկրորդ դիմումատուներն փաստել են, որ այն դեպքում, երբ նրանք չեն բողոքարկել այս կամ այն մերժումը, չի նշանակում, որ նրանք համաձայն են եղել մերժման հետ, այլ պարզապես նրանց սահմանափակ իրավաբանական իրազեկվածության և որոշ ժամանակահատվածներում փաստաբան չունենալու հետևանք է եղել: Առաջին դիմումատուի հաշմանդամության, երկրորդի մտավոր թերզարգացվածության և երրորդի անչափահասության հիմքով վերջիններիս, իրենց ցանկությունից անկախ, պետք է տրամադրվեր պաշտպան, քանի որ դա պարտադիր էր ներպետական օրենսդրությամբ:

134. Ինչ վերաբերում է Կառավարության առաջին պնդմանը, ապա Դատարանը նշում է, որ առաջին և երկրորդ դիմումատուները դատարան ներկայացրած իրենց բողոքներում իսկապես չեն բարձրացրել փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու դիմումի մերժման հարցը: Հետևաբար, գանգատի այս մասն անընդունելի է՝ ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու պատճառով: Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու առաջին դիմումատուի ենթադրյալ ձախողմանը, ապա Դատարանը գտնում է, որ այս հարցի քննությունը սերտորեն կապված է առաջին դիմումատուի բողոքների էության հետ և պետք է միացվի գործի ըստ էության քննությանը:

135. Դատարանը նշում է, որ այս գանգատներն ակնհայտորեն անհիմն չեն՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ կետի (ա) ենթակետի: Այնուհետև, Դատարանը նշում է, որ դրանք անընդունելի չեն որևէ այլ հիմքով: Հետևաբար, նշված գանգատները հայտարարվում են ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Կառավարությունը

136. Ինչ վերաբերում է դատական նիստերի դահլիճում անվտանգությանը, ապա Կառավարությունը պնդել է, որ դատարաններն ապահովել են անհրաժեշտ անվտանգությունը և ձեռնարկել են օրենքով

նախատեսված բոլոր միջոցները: Սակայն, փաստաբանը պարբերաբար չի ներկայացել՝ առանց նախապես տեղեկացնելու: Օրինակ՝ 2005 թվականի հունվարի 21–ին նախագահող դատավորը փաստաբանի բացակայության հետ կապված Փաստաբանների պալատին խնդրել է միջոցներ ձեռնարկել: Այնուհետև, փաստաբանը հրաժարվել է 2005 թվականի հունվարի 25–ի դատական նիստին մասնակցելուց: 2005 թվականի հունիսի 27–ին վերաքննիչ դատարանը փաստաբանին տեղեկացրել է, որ համապատասխան անվտանգության միջոցները ձեռնարկվել են, բայց փաստաբանը, այնուամենայնիվ, չի ներկայացել: Արդյունքում, դիմումատուները հրաժարվել են նրա ծառայություններից և նրան այդ մասին նամակով տեղյակ պահել 2005 թվականի հուլիսի 1–ին: Վերջապես, Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ–ի) 98–րդ հոդվածը, որը վերաբերում է պաշտպանության միջոցներին, հակառակ դիմումատուների պնդմանը, կիրառելի չէր գործի նկատմամբ, քանի որ այն պահանջում է տուժողի գրավոր դիմում, մինչդեռ փաստաբան Ս.–ն երբեք նման դիմում չի ներկայացրել:

137. Առաջին դիմումատուի՝ Վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Կառավարությունն այնուհետ պնդել է, որ դիմումատուն անձամբ կամ փաստաբանի միջոցով բողոք չի ներկայացրել Վճռաբեկ դատարան: Փաստաբան Ս.–ի բողոքը չի քննվել, քանի որ նա այլևս լիազորված չի եղել ներկայացնելու առաջին դիմումատուին: Եթե այդ ընթացքում առաջին դիմումատուն նորից է դիմել փաստաբանին, ապա նա պետք է տեղեկացներ Վճռաբեկ դատարանին: Կառավարությունը ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ երկրորդ դիմումատուն անձամբ է բողոք ներկայացրել Վճռաբեկ դատարան: Սա ապացուցում է, որ նա փաստաբան Ս.–ի ծառայություններից հրաժարվելու հարցում հետևողական է եղել: Սակայն, առաջին դիմումատուն չի օգտվել այդ հնարավորությունից:

բ) Դիմումատուները

138. Առաջին և երկրորդ դիմումատուները պնդել են, որ դատական նիստերի դահլիճում անվտանգության ապահովման մասին Կառավարության պնդումը չէր համապատասխանում իրականությանը: Ընդհակառակը, փաստաբանների դեմ հնչած սպառնալիքները և բռնության դեպքերը եղել են դատարանի լուռ համաձայնությամբ: Դատարանում անվտանգության ապահովման մասին դատարանի հավաստիացումները եղել են պարզապես սին հայտարարություններ: Ավելին, ՔԴՕ–ի 98–րդ հոդվածով պահանջվում է, որ անվտանգության հետ կապված բողոքները քննվեն անմիջապես՝ ամենաուշը 24 ժամվա ընթացքում: Որոշումը պետք է կայացվեր, իսկ դրա պատճենը պետք է ուղարկվեր տվյալ անձին: Սակայն նման որևէ որոշում չի կայացվել առաջին ատյանի կամ Վերաքննիչ դատարանների կողմից, և որևէ հատուկ պաշտպանության միջոցներ չեն ձեռնարկվել: Այսպիսով, փաստաբանին անվտանգության երաշխիքներ չեն տրվել, որի պատճառով էլ

փաստաբանը չի կարողացել ներկայանալ: Արդյունքում, առաջին և երկրորդ դիմումատուները զրկված են եղել արդյունավետ իրավաբանական օգնությունից:

139. Առաջին դիմումատուն պնդել է, որ դատարանի մատչելիության իր իրավունքը խախտվել է, քանի որ Վճռաբեկ դատարանը ձևական պատճառներով մերժել է ընդունել փաստաբան Ս.–ի բողոքը՝ չնայած, որ այն ըստ էության ընդունելի է եղել:

2. Դատարանի գնահատականը

140. Դատարանը վերահաստատում է, որ արդար դատաքննության հիմնարար բաղադրիչներից մեկն է հանդիսանում յուրաքանչյուր անձի իրեն ներկայացված քրեական մեղադրանքի առնչությամբ փաստաբանի, անհրաժեշտության դեպքում նաև պետության կողմից նշանակված պաշտպանի կողմից արդյունավետ պաշտպանված լինելու իրավունքը, չնայած վերջինս բացարձակ իրավունք չէ (տե՛ս *Կրոմբախն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 29731/96, § 89, ՄԻԵԴ 2001-II):

141. Սույն գործով առաջին և երկրորդ դիմումատուները պնդել են, որ այս իրավունքը խախտվել է, քանի որ քրեական վարույթն իրականացնող մարմինները չեն կարողացել դատարանում ապահովել անվտանգությունը, որը իրենց փաստաբաններին թույլ չի տվել արդյունավետ իրականացնել իրենց գործառույթները: Դատարանն ի սկզբանե նշում է, որ Կառավարությունը չի վիճարկել առաջին և երկրորդ դիմումատուների՝ դատական նիստերին տիրող մթնոլորտի նկարագրությունը, սակայն պնդում է, որ փաստաբանների անվտանգությունն ապահովելու համար ձեռնարկվել էին համապատասխան միջոցներ և, հետևաբար, փաստաբան Ս.–ի չներկայանալն արդարացված չէր:

142. Սակայն Դատարանը Կառավարության փաստարկը համոզիչ չի համարում: Դատարանը նշում է, որ ո՛չ Կառավարությունը, ո՛չ էլ ներպետական դատարանները երբեք չեն մատնանշել որևէ հատուկ միջոց, որը ենթադրաբար ձեռնարկվել է՝ դատարանում անվտանգությունն ապահովելու նպատակով: Ինչպես նաև գործի նյութերում չկա որևէ այլ ապացույց՝ ենթադրելու, որ երբևէ ձեռնարկվել է ՔԴՕ–ի 98–րդ հոդվածում նշված պաշտպանության միջոցներից որևէ մեկը: 2005 թվականի հունիսի 27–ի նամակում Վերաքննիչ դատարանի կողմից արված հավաստիացումները չեն պարունակում մանրամասներ (տե՛ս վերևում՝ § 41): Դատարանը նաև նշում է, որ Կառավարության այն փաստարկը, որ ՔԴՕ–ի 98–րդ հոդվածի համաձայն անհրաժեշտ է ներկայացնել տուժողի գրավոր դիմումը, ուղղակիորեն հակասում է այդ դրույթի տեքստին, որով քրեական գործի վարույթն իրականացնող մարմիններին թույլատրվում է սեփական նախաձեռնությամբ ձեռնարկել պաշտպանության միջոցները: Ավելին, չի կարելի ասել, որ դատարանները տեղյակ չեն եղել խնդրի մասին, քանի որ անվտանգության հետ կապված հարցերը առաջացել են դատարանի դահլիճում: Հետևաբար, դատավարության պատշաճ ընթացքն ապահովելու

համար նրանք կարող էին ձեռնարկել ՔԴՕ–ի 98–րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցները, ինչը նրանք, ըստ երևույթին, չեն արել: Այնուամենայնիվ, դեռևս պետք է որոշվիարդյոք այն խախտել է առաջին և երկրորդ դիմումատուների՝ Կոնվենցիայի 6–րդ հոդվածով նախատեսված իրավունքները:

143. Դատարանը նշում է, որ և՛ մարզի, և՛ վերաքննիչ դատարանների նիստերը, ըստ երևույթին, անցկացվել են առաջին և երկրորդ դիմումատուների, նրանց ընտանիքի անդամների և փաստաբանների նկատմամբ անընդհատ սպառնալիքների, հայհոյանքների և ֆիզիկական բնույթի ոտնձգությունների մթնոլորտում: Պարզվում է, որ բազմաթիվ առիթներով ծեծկռտուքներ են եղել, կամ փաստաբանները ֆիզիկական վնասվածքներ են ստացել: Իրավիճակն այնքան վատ է եղել, որ փաստաբանները ստիպված են եղել չներկայանալ դատական նիստերին՝ վախենալով իրենց անվտանգության համար, և ներկայացրել են բազմաթիվ բողոքներ, այդ թվում՝ մեկը ոստիկանությանը: Դատարանը կասկած չունի, որ դատարանում նման իրավիճակը պետք է որ բացասաբար ազդեր փաստաբանների ուշադրության կենտրոնացման վրա և նրանց թույլ չտար պատշաճ ձևով կատարել իրենց գործառույթները: Այն պետք է որ վախի զգացողություններ առաջացրած լիներ և, հնարավոր է, բացասաբար ազդած լիներ դատարանում փաստաբանների վարքագծի, ինչպես նաև գործի հետ կապված ընդհանուր աշխատանքների վրա: Ի վերջո Դատարանը նշում է, որ այս իրավիճակը շարունակվել է ամբողջ դատավարության ընթացքում՝ առաջին և երկրորդ ատյաններում, որոնք կոչված են եղել հրապարակային դատական նիստի ժամանակ պարզել փաստերի և իրավունքի հետ կապված հարցերն ու կայացնել դատավճիռ:

144. Վերոնշյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ առաջին և երկրորդ դիմումատուների քրեական գործով դատական նիստերի անցկացման ձևը խախտել է Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետի և 3–րդ կետի (գ) ենթակետով սահմանված երաշխիքները:

145. Դեռևս պետք է որոշվի արդյոք առաջին դիմումատուի դատարանի մատչելիության իրավունքը հարգվել է, թե՝ ոչ: Դատարանն այս առումով վերահաստատում է, որ դատարան դիմելու իրավունքը, որի մի մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ, բայց կարող է ենթարկվել սահմանափակումների պետության կողմից կարգավորման եղանակով: Այդ առումով պետությունն ունի հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ: Այնուամենայնիվ, կիրառվող սահմանափակումները չպետք է սահմանափակեն անհատի՝ դատարան դիմելու իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Ավելին, որևէ սահմանափակում համատեղելի չի լինի 6–րդ հոդվածի 1–ի կետի դրույթների հետ, եթե այն չի հետապնդում օրինական նպատակ, և եթե գործադրած միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերություն (տե՛ս այլ մարմինների շրջանակում, *Խալֆաուն ընդդեմ*

Ֆրանսիայի, թիվ 34791/97, § 35, ՄԻԵԴ 1999–IX և *Պապոն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 54210/00, § 90, ՄԻԵԴ 2002–VII):

146. Սույն գործում առաջին դիմումատուի անունից իրավական հարցերի վերաբերյալ փաստաբան Ս.–ի կողմից ներկայացված բողոքը Վճռաբեկ դատարանի կողմից չի ընդունվել քննության այն հիմքով, որ փաստաբան Ս.–ն նրան ներկայացնելու լիազորություն այլևս չի ունեցել: Դատարանը համարում է, որ այն կանոնը, որով պահանջվում է, որ բողոքը դատարան ներկայացվի պատշաճ լիազորված անձի կողմից, ինքնին չի խախտում դատարանի մատչելիության իրավունքը: Մյուս կողմից, Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ առաջին և երկրորդ դիմումատուների՝ իրենց փաստաբանի ծառայություններից հրաժարվելու հանգամանքները պարուրված են անորոշությամբ:

147. Մասնավորապես, դիմումատուները պնդում են, որ 2005 թվականի հուլիսի 1–ի դատական նիստի արձանագրությունը կեղծ է և, որ իրականում նրանք չեն հրաժարվել փաստաբան Ս.–ի ծառայություններից: Չնայած այն բանի, որ այս պնդումն ստուգելու որևէ օբյեկտիվ եղանակ չկա, սակայն Դատարանը նշում է, որ 2005 թվականի հուլիսի 8–ին փաստաբան Ս.–ն այցելել է քրեակատարողական հիմնարկում գտնվող երկրորդ դիմումատուին, ըստ երևույթին, պաշտպանի կարգավիճակում, և իր բողոքը ներկայացրել է մի քանի օր անց (տե՛ս վերևում՝ §§ 46, 47): Դատարանը զարմանալի է համարում այն, որ երկրորդ դիմումատուն, ով միայն մի քանի օր առաջ ենթադրաբար հրաժարվել էր իր փաստաբանի ծառայություններից, կհանդիպեր փաստաբան Ս.–ի հետ և որը կհանգեցներ փաստաբան Ս.–ի կողմից բողոքը ներկայացնելուն: Ավելին, փաստաբան Ս.–ն շարունակել է ներկայացնել դիմումատուներին զուգահեռ դատավարություններում (տե՛ս վերևում՝ § 75):

148. Իսկ առավել կարևոր է այն, որ Դատարանը, ելնելով այն հանգամանքից, որ առաջին և երկրորդ դիմումատուները 2005 թվականի հուլիսի 1–ին իրոք հրաժարվել են իրենց փաստաբանի ծառայություններից, նշում է այն պայմանները, որոնցում առաջին և երկրորդ դիմումատուները կայացրել են իրենց որոշումը: Այս առնչությամբ Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքից թույլատրելիության սահմաններում հրաժարվելը, պետք է հստակ հիմնավորվի և պետք է իրագործվի այնպիսի նվազագույն երաշխիքների պահպանմամբ, որոնք կհամապատասխանեն դրա կարևորությանը (տե՛ս այլ մարմինների շրջանակում, *Սեյդովիչն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ], թիվ 56581/00, §86, ՄԻԵԴ 2006-II): Դատարանն արդեն հաստատել է, որ մոտավորապես տասն ամիս տևող դատավարության ամբողջ ընթացքում դատական նիստերն անցկացվել են շարունակական վախի և դիմումատուներին ու իրենց փաստաբաններին ուղղված հայհոյանքների և ֆիզիկական բնույթի ոտնձգության մթնոլորտում: 2005 թվականի հուլիսի 1–ի դատական նիստին նախորդող նիստերը աչքի են ընկել հատուկ բռնությամբ, այդ թվում՝ փաստաբան Ս.–ի նկատմամբ

ենթադրյալ ֆիզիկական հարձակմամբ, որի հետևանքով փաստաբանը հրաժարվել է ներկայանալ, եթե դատարանի դահլիճում չապահովվի անվտանգությունը: Դատարանը լուրջ կասկածներ ունի, արդյոք նման հանգամանքներում փաստաբանի ծառայություններից հրաժարվելու որոշումը կարող է իսկապես համարվել կամավոր և անվերապահ, ինչպես նաև պայմանավորված լինել առաջին և երկրորդ դիմումատուների ազատ՝ առանց որևէ արտաքին ազդեցությունների, կամքի դրսևորմամբ:

149. Երկրորդ դիմումատուն և փաստաբան Ս.–ն իրենց բողոքներում Վճռաբեկ դատարանին տեղեկացրել են այս հանգամանքների մասին, բայց թվում է, որ Վճռաբեկ դատարանը հիմնականում սահմանափակվել է 2005 թվականի հուլիսի 1–ի դատական նիստի արձանագրությանը հղում կատարելով և մանրամասն չի ուսումնասիրել ենթադրյալ հանգամանքները: Արդյունքում, փաստաբան Ս.–ն բողոք է ներկայացրել, որը, ձևական նկատառումներից ելնելով և առանց բողոքում ներկայացված պնդումները ուսումնասիրելու, չի ընդունվել: Սակայն այդ պնդումներն արժանի են առավել հանգամանորեն դիտարկման՝ հաշվի առնելով գործի առանձնահատուկ հանգամանքները: Այսպիսով, կարելի է ասել, որ Վճռաբեկ դատարանը, մերժելով ենթադրաբար առաջին դիմումատուի անունից փաստաբան Ս.-ի կողմից ներկայացրած բողոքը, գործել է ավելորդ ձևականությամբ և պատշաճ ջանասիրություն չի գործադրել, որի արդյունքում անհամաչափորեն սահմանափակվել է առաջին դիմումատուի՝ այդ դատարան դիմելու իրավունքը: Այս եզրակացությանը հանգելով՝ Դատարանը մերժում է Կառավարության պնդումն առ այն, որ չեն սպառվել իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

150. Համապատասխանաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետի խախտում՝ զուգակցված 6–րդ հոդվածի 3–րդ կետի (գ) ենթակետի հետ՝ այն առումով, որ առաջին և երկրորդ դիմումատուները զրկված են եղել արդյունավետ իրավաբանական օգնությունից, ինչպես նաև տեղի է ունեցել 6–րդ հոդվածի 1–ին կետի խախտում՝ այն առումով, որ առաջին դիմումատուն անհամաչափորեն զրկվել է դատարանի մատչելիության իրավունքից:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

151. Դիմումատուները նաև առաջ են քաշել մի շարք գանգատներ՝ Կոնվենցիայի 1-ին, 5–րդ և 6–րդ հոդվածների վերաբերյալ:

152. Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը, ինչպես նաև այն, որ նշված գանգատները իր իրավասության շրջանակներում են, գտնում է, որ չի հայտնաբերվել Կոնվենցիայով կամ դրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների և ազատությունների խախտման որևէ դեպք: Այստեղից հետևում է, որ գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է և ենթակա է մերժման՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3–րդ և 4-րդ կետերի:

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41–ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

153. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսվում է՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, արդարացի փոխհատուցում տրամադրել տուժած կողմին»:

Ա. Վնաս

154. Դիմումատուները որպես նյութական վնասի փոխհատուցում պահանջել են 20,000 եվրո՝ ներառյալ առաջին և երրորդ դիմումատուների բաց թողնված օգուտները, ինչպես նաև ծանրոցների և քրեակատարողական հիմնարկ այցելության համար փոխադրման ծախսերը: Այնուհետև նրանք լրացուցիչ պահանջել են 300,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

155. Կառավարությունը պնդել է, որ պահանջված նյութական վնասը ենթադրական է և հիմնավորված չէ որևէ ապացույցով, իսկ ոչ նյութական վնասի համար պահանջվող գումարը չափազանց մեծ է եղել:

156. Դատարանը որևէ պատճառահետևանքային կապ չի տեսնում հայտնաբերված խախտման և ենթադրյալ նյութական վնասի միջև, հետևաբար, մերժում է այս պահանջը: Մյուս կողմից, առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանն առաջին դիմումատուին տրամադրում է 10,000 եվրո, երկրորդ դիմումատուին՝ 27,000, իսկ երրորդ դիմումատուին՝ 25,000 եվրո փոխհատուցում՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Բ. Ծախսերը և ծախքերը

157. Դիմումատուները պահանջել են նաև 100 եվրո՝ դատական ծախսերի և ծախքերի համար, մասնավորապես՝ փոստային ծառայության ծախքերի համար: Նրանք Դատարանին նաև խնդրել են սահմանել 2005 թվականից սկսած իրենց փաստաբանի կողմից մատուցված իրավաբանական ծառայությունների համար ողջամիտ գումարի չափ:

158. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի տրամադրել փոստային ծառայության ծախսերի ոչ մի ապացույց: Ինչ վերաբերում է իրավաբանական ծառայություններին, ապա ոչ մի փոխհատուցում չպետք է տրամադրվի, քանի որ փաստաբանն անվճար էր մատուցել իր ծառայությունները, իսկ դիմումատուները դրա դիմաց որևէ ծախսեր չէին կրել:

159. Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման իրավունք՝ այնքանով, որքանով ապացուցվել է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, և դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործի շրջանակներում հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը և վերը նշված չափորոշիչները՝ դատարանը ողջամիտ է համարում փոստային ծառայության ծախքերի դիմաց 100 եվրո գումարի փոխհատուցումը: Ինչ վերաբերում է իրավաբանական ծախսերին, ապա չկա ապացույց, որ դիմումատուները պարտավորություն են կրում փաստաբանի առջև վճարելու որևէ գումար: Նման հանգամանքներում, այս ծախսերը չեն կարող պահանջվել, քանի որ դրանք իրականում չեն կատարվել և այս պահանջը պետք է մերժվի (տե՛ս համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), *ՄակՔենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1995 թվականի սեպտեմբերի 27, § 221, Սերիա Ա թիվ 324):

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույք

160. Դատարանը պատշաճ է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանված փոխառության առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Որոշում է* միացնել գանգատները.

2. *Որոշում է* իրավական պաշտպանության ներպետական միջոցների ենթադրյալ սպառման հարցի քննությունը միացնել գործի՝ ըստ էության քննությանը և այն մերժել.

3. Դիմումատուների նկատմամբ վատ վերաբերմունքի և արդյունավետ քննության բացակայության, ինչպես նաև արդյունավետ իրավաբանական օգնություն ստանալու առաջին և երկրորդ դիմումատուների իրավունքի և Վճռաբեկ դատարան դիմելու առաջին դիմումատուի իրավունքի ենթադրյալ խախտման մասին գանգատները *հայտարարում է* ընդունելի, իսկ մնացած գանգատները՝ անընդունելի.

4. *Վճռում է*, որ երկրորդ և երրորդ դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3–րդ հոդվածի նյութաիրավական խախտում.

5. *Վճռում է*, որ առաջին դիմումատուի նկատմամբ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 3–րդ հոդվածի նյութաիրավական խախտում.

6. *Վճռում է*, որ բոլոր երեք դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում.

7. *Վճռում է*, որ տեղի է ունեցել 6–րդ հոդվածի 1–ին կետի խախտում՝ զուգակցված Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3–րդ կետի (գ) ենթակետի հետ առ այն, որ առաջին և երկրորդ դիմումատուները զրկված են եղել արդյունավետ իրավաբանական օգնությունից.

8. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետի խախտում առ այն, որ առաջին դիմումատուն անհամաչափորեն զրկվել է դատարանի մատչելիության իրավունքից.

9. *Վճռում է*, որ
   ա) պատասխանող պետությունը, Կոնվենցիայի 44–րդ հոդվածի 2–րդ կետին համապատասխան վճիռը վերջնական դառնալուց հետո երեք ամսվա ընթացքում, պետք է դիմումատուներին վճարի հետևյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման ամսաթվին սահմանված փոխարժեքով.
      i) որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ 10,000 եվրո (տասը հազար եվրո) առաջին դիմումատուին, 27,000 եվրո (քսանյոթ հազար եվրո) երկրորդ դիմումատուին և 25,000 եվրո (քսանհինգ հազար եվրո) երրորդ դիմումատուին, գումարած որևէ տեսակի հարկ, որը կարող է հաշվարկվել նշված գումարի նկատմամբ,
      ii) ծախսերի և ծախքերի դիմաց՝ 100 եվրո (հարյուր եվրո)՝ գումարած որևէ տեսակի հարկ, որը կարող է հաշվարկվել դիմումատուներին վճարվող գումարի նկատմամբ,
   բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի վերը նշված գումարի պարզ տոկոս՝ պարտավորությունների չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի չափով ՝ գումարած երեք տոկոսային կետ.

10. *Մերժում է* դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր կերպով ծանուցվել է 2015 թվականի մարտի 31–ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77–րդ կանոնի 2–րդ և 3–րդ կետերի:

Մարիալենա Ցիրլի [Marialena Tsirli]
Քարտուղարի տեղակալ

Ջոսեփ Կասադևալ [Josep Casadevall]
Նախագահ

Կոնվենցիայի 45–րդ հոդվածի 2–րդ կետին և Դատարանի կանոնակարգի 74–րդ կանոնի 2–րդ կետին համապատասխան՝ այս վճռին կից ներկայացվում է դատավոր Մոտոչի հատուկ կարծիքը:

Ջ.Ք.Մ
Մ.Ց.

ԴԱՏԱՎՈՐ ՄՈՏՈՂԻ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

(Թարգմանություն)

Ես լիովին համաձայն եմ Պալատի մոտեցման հետ: Այն ընդունել է Դատարանի նախադեպային իրավունքի համար կարևոր մոտեցում, բայց պատճառաբանությունը բավականին մշակված չէ: Պալատն անազատության մեջ գտնվելու ընթացքում երկու տուժողների նկատմամբ կիրառված բռնությունը ճիշտ ձևով որակել է որպես խոշտանգում: Սակայն ի՞նչ իրավական հիմքով է Պալատը վճռել, որ այդ գործողությունները խոշտանգում են: Ավելին, ինչպե՞ս է Պալատը տարբերակել խոշտանգումը և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը:

1. Կասկած չկա, որ այս գործում պետական մարմինները գործել են խոստովանություն կորզելու մտադրությամբ (տե՛ս համարժեք իրավական ուժ ունեցող *Դիքմեն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 20869/92, § 64, ՄԻԵԴ 2000-VIII, և *Ակսոյն ընդդեմ Թուրքիայի*, 1996 թվականի դեկտեմբերի 18, § 9, *Վճիռների և որոշումների մասին զեկույցներ* 1996–VI) երկրորդ դիմումատուի դեպքում, իսկ երրորդ դիմումատուի դեպքում՝ տեղեկություններ ստանալու մտադրությամբ: Երկու դեպքում էլ նրանք ուժ են գործադրել՝ երկու տուժողներին վախեցնելու համար: Երկու դիմումատուներն էլ եղել են խոցելի իրավիճակում՝ հաշվի առնելով այն փաստը, որ նրանք պահվել են ոստիկանությունում: Վարքագծի հիմքում ընկած մտադրության (*dolus specialis*) և տուժողների խոցելիության գործոնները մատնանշում են, որ սա եղել է խոշտանգման, ոչ թե անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպք: Այս երկու գործոնները գերակայում են ցավի կամ տառապանքի ֆիզիկական ուժգնության նկատմամբ (տե՛ս Նովակ Մ. և ՄակԱրթուր Ե., *Միավորված ազգերի կազմակերպության խոշտանգումների դեմ կոնվենցիա: Մեկնաբանություն,* Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն, 2008թ., էջ 77):

2. Այս երկու տուժողների՝ մոր և աղջկա գործը եզակի է այն առումով, որ պետական մարմինների կողմից իրագործված գործողությունների հետևանքով պատճառված սուր տառապանքը եղել է ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեկան: Այս գործում անհրաժեշտ չէ պարզել հարցաքննության տեխնիկաները, որոնք ծանոթ են Դատարանին, օրինակ՝ պաղեստինյան ձևով կախելը (տե՛ս վերևում՝ *Ակսոյն ընդդեմ Թուրքիայի*), ծեծը (տե՛ս վերևում՝ *Դիքմեն ընդդեմ Թուրքիայի*), *«ֆալակա»* խոշտանգման տեսակը (*Սալմանն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], թիվ 21986/93, ՄԻԵԴ 2000-VII), էլեկտրահարումը (տե՛ս *Ակկոսն ընդդեմ Թուրքիայի*, թթ. 22947/93 և 22948/93, ՄԻԵԴ 2000-X, և *Միխեևն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 77617/01, 2006 թվականի հունվարի 26), կամ բռնաբարությունը (տե՛ս *Այդինն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], թիվ 23178/94, 1997 թվականի սեպտեմբերի 25), այլ այն, որ երկու տուժողի միջև ընտանեկան շատ սերտ կապերի առկայությունը հանգեցրել է ուժգին հոգեկան տառապանքների, բավարար է եղել եզրակացնելու, որ կալանքի տակ գտնվելու ժամանակ գործադրված ֆիզիկական բռնությունը խոշտանգման դեպք էր:

3. Պարզ է, որ Դատարանն արդեն անդրադարձել է հոգեկան տառապանքի կարևորությանը՝ *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության* գործում (1978 թվականի հունվարի 18, Սերիա Ա թիվ 25), որում դատարանը նշել է, որ հոգեկան բնույթի տառապանքն ինքնին բավարար է՝ գործողությունը որպես խոշտանգում որակելու համար: Հանձնաժողովը Հունական գործում (12–րդ տարեգիրք) արդեն օգտագործել էր «ոչ ֆիզիկական բնույթի խոշտանգում» եզրույթը և այն բնութագրել էր որպես մարմնական բռնությունից զատ այլ միջոցներով պատճառված տառապանք և սթրես:

4. Հաշվի առնելով այն, որ սույն գործը վերաբերում էր ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեկան բնույթի բռնությանը, Պալատը պետք է հղում կատարեր *Քեմփբելը և Քոզանսն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1982 թվականի փետրվարի 25, Սերիա Ա թիվ 48) գործով սահմանված և *Գեֆգենն ընդդեմ Գերմանիայի* ([ՄՊ], թիվ 22978/05, ՄԻԵԴ 2010) գործով մշակված Դատարանի սկզբունքներին: Այսպիսով, որևէ անձի խոշտանգմամբ սպառնալը կարող է համարվել որպես առնվազն անմարդկային վերաբերմունք (տե՛ս *Քեմփբելը և Քոզանսն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 26) և «մասնավորապես, ֆիզիկական խոշտանգումից վախն ինքնին կարող է համարվել որպես հոգեկան խոշտանգում: Սակայն թվում է, որ կա ընդհանուր համաձայնություն, և Դատարանը նույնպես համարում է, որ այն որակումը, թե արդյոք տվյալ ֆիզիկական խոշտանգման սպառնալիքը համարվում է հոգեկան խոշտանգում, կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, կախված է տվյալ գործի հանգամանքներից, այդ թվում, մասնավորապես՝ գործադրված ճնշման ծանրությունից և պատճառած հոգեկան տառապանքի ուժգնությունից» (տե՛ս վերևում՝ *Գեֆգեն*, § 108):

5. Վերջապես՝ ապացույցների հարցը: Երկու դիմումատուները ներկայացրել են ֆիզիկական բռնությունը հաստատող բժշկական տեղեկանքներ: Այս վկայականները վիճարկվել են Կառավարության կողմից, որը չի ներկայացրել իր առարկությունը հիմնավորող որևէ վերաբերելի ապացույց: Հայտնի է, որ երկու դիմումատուները չեն տրամադրել իրենց հոգեկան տառապանքը հաստատող բժշկական տեղեկանքներ, սակայն տվյալ հանգամանքներում անհնար էր դրանք ներկայացնել: Տուժողների արժանահավատությունն արտահայտվում է համընկնող բոլոր գործոններով՝ միասին վերցված: